

«ԱՐՄԵՆ ԵՎ ՆԵՐՍԵՍ»

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՇԵՆԱԹԱՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԹԻՎ 1 ԱԾԽԱԹԹՎԱՅԻՆ
ՀԱՆՔԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ
ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

(Արդյունահանման ՇԱԹՎ-29/390 թույլտվության ժամկետի
երկարաձգում)

«ԱՐՄԵՆ ԵՎ ՆԵՐՍԵՍ» ՍՊԸ

տնօրեն՝

Ռ. ՂԱՐԻԲՅԱՆ

Երևան – 2021թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ	3
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	8
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	8
1.1. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը	8
1.2. Նախատեսվող գործունեության բնութագիրը	8
1.3 Նախագծման նորմատիվային հիմքը	9
2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	12
2.1 Նախատեսվող գործունեության գտնվելու վայրը	12
2.2 Ռելիեֆը, երկրաձևաբանությունը	15
2.3 Կլիմա	17
2.4 Մթնոլորտային օդ	23
2.5 Աղմուկի մակարդակը	24
2.6 Ջրային ռեսուրսներ	33
2.7 Հողային ծածկույթ	37
2.9 Կենսաբազմազանություն. բուսական և կենդանական աշխարհ	37
2.8 Վտանգված էկոհամակարգեր և բնության հատուկ պահպանվող տարածքներ	39
3.ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	42
3.1 ՀՀ Սյունիքի մարզի սոցիալ տնտեսական բնութագիրը	42
4.ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	46
5. ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆԸ/ԲԱՑԱՌՄԱՆԸ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	48
5.1. Բնապահպանական մշտադիտարկումների պլան	51
5.2 Սանիտարական պաշտպանիչ գետի	54
5.3 Արդյունաբերական սանիտարիան	55

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Ներկայացվող սահմանումները և եզրույթները /տերմիններ/ բերվում են ՀՀ բնապահպանական ոլորտի օրենքներից և նորմատիվ փաստաթղթերից:

Շրջակա միջավայր՝ բնական և մարդածին տարրերի (մթնոլորտային օդ, ջրեր, հողեր, ընդերք, լանդշաֆտ, կենդանական ու բուսական աշխարհ, ներառյալ՝ անտառ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, բնակավայրերի կանաչ տարածքներ, կառույցներ, պատմության և մշակույթի հուշարձաններ) և սոցիալական միջավայրի (մարդու առողջության և անվտանգության), գործունեների, նյութերի, երևույթների ու գործընթացների ամբողջությունը և դրանց փոխազդեցությունը միմյանց ու մարդկանց միջև:

Շրջակա միջավայրի վրա ազդեցություն՝ հիմնադրությային փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետեւանքով շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա հնարավոր փոփոխությունները:

Նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում:

Ձեռնարկող՝ սույն օրենքի համաձայն՝ փորձաքննության ենթակա հիմնադրությային փաստաթուղթ մշակող, ընդունող, իրականացնող և (կամ) գործունեություն իրականացնող կամ պատվիրող պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմին, իրավաբանական կամ ֆիզիկական անձ:

Ազդակիր համայնք՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրությային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք:

Շահագրգիռ հանրություն՝ փորձաքննության ենթակա հիմնադրությային փաստաթղթի ընդունման և (կամ) նախատեսվող գործունեության իրականացման առնչությամբ հետաքրքրություն ցուցաբերող իրավաբանական և ֆիզիկական անձինք:

Գործընթացի մասնակիցներ՝ պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններ, ֆիզիկական ու իրավաբանական անձինք, ներառյալ՝ ազդակիր համայնք, շահագրգիռ հանրություն, որոնք, սույն օրենքի համաձայն, մասնակցում են գնահատումների և (կամ) փորձաքննության գործընթացին:

Հայտ՝ ձեռնարկողի կամ նրա պատվերով կազմած հիմնադրությային փաստաթղթի մշակման և (կամ) նախատեսվող գործունեության նախաձեռնության մասին ծանուցման փաթեթ:

Բնության հատուկ պահպանվող տարածք՝ ցամաքի (ներառյալ՝ մակերևութային ու ստորերկրյա ջրերը և ընդերքը) և համապատասխան օդային ավազանի՝ սույն օրենքով գիտական, կրթական, առողջարարական, պատմամշակութային, ռեկրեացիոն, զբոսաշրջության, գեղագիտական արժեք են ներկայացնում, և որոնց համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ.

Ազգային պարկ՝ բնապահպանական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, ռեկրեացիոն արժեքներ ներկայացնող միջազգային և (կամ) հանրապետական նշանակություն ունեցող տարածք, որը բնական լանդշաֆտների ու մշակութային արժեքների զուգորդման շնորհիվ կարող է օգտագործվել գիտական, կրթական, ռեկրեացիոն, մշակութային և տնտեսական նպատակներով, և որի համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ.

Ազգային պարկի արգելոցային գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ գործում է պետական արգելոցի համար սույն օրենքով սահմանված ռեժիմը.

Ազգային պարկի արգելավայրային գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ գործում է պետական արգելավայրի համար սույն օրենքով սահմանված ռեժիմը.

Ազգային պարկի ռեկրեացիոն գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ թույլատրվում է քաղաքացիների հանգստի և զբոսաշրջության ու դրա հետ կապված սպասարկման ծառայության կազմակերպումը.

Ազգային պարկի տնտեսական գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ թույլատրվում է ազգային պարկի ռեժիմին համապատասխանող տնտեսական գործունեություն.

Պետական արգելավայր՝ գիտական, կրթական, պատմամշակութային, տնտեսական արժեք ներկայացնող տարածք, որտեղ ապահովվում են էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների պահպանությունը և բնական վերարտադրությունը.

Պետական արգելոց՝ գիտական, կրթական, պատմամշակութային արժեք ներկայացնող առանձնահատուկ բնապահպանական, գեղագիտական հատկանիշներով օժտված միջազգային և (կամ) հանրապետական նշանակություն ունեցող տարածք, որտեղ բնական միջավայրի զարգացման գործընթացներն ընթանում են առանց մարդու անմիջական միջամտության.

Բնության հատուկ պահպանվող տարածքի պահպանման գոտի՝ տարածք, որի ստեղծման նպատակն է սահմանափակել (մեղմացնել) բացասական մարդածին ներգործությունը բնության հատուկ պահպանվող տարածքների էկոհամակարգերի, կենդանական ու բուսական աշխարհի ներկայացուցիչների, գիտական կամ պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտների վրա.

Լանդշաֆտ՝ աշխարհագրական թաղանթի համասեռ տեղամաս, որը հարևան տարածքներից տարբերվում է երկրաբանական կառուցվածքի, ռելիեֆի, կլիմայի, հողաբուսական ծածկույթի և կենդանական աշխարհի ամբողջությամբ.

Հող՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ.

Հողային պրոֆիլ՝ հողագոյացման գործընթացում օրինաչափորեն փոփոխվող և գենետիկորեն կապակցված հողային հորիզոնների ամբողջություն.

Խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր.

Հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով.

Հողի պոտենցիալ բերրի շերտ՝ հողային պրոֆիլի ստորին մասը, որն իր հատկություններով համընկնում է պոտենցիալ բերրի ապարների (բուսականության աճի համար սահմանափակ բարենպաստ քիմիական կամ ֆիզիկական հատկություններ ունեցող լեռնային ապարներ) հատկություններին.

Հողածածկույթ՝ երկրի կամ դրա ցանկացած տարածքի մակերևույթը ծածկող հողերի ամբողջությունն է.

Հողի բերրի շերտի հանման նորմեր՝ հողի հանվող բերրի շերտի խորությունը (սմ), ծավալը (մ^3), զանգվածը (տ).

Ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական.

Ռեկուլտիվացիոն աշխատանքներ՝ օգտակար հանածոների արդյունահանման նախագծով կամ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության ծրագրով շրջակա միջավայրի պահպանության նպատակով նախատեսված ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնմանն ուղղված (անվտանգ կամ օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումներ.

Կենսաբանական բազմազանություն՝ ցամաքային, օդային և ջրային էկոհամակարգերի բաղադրիչներ համարվող կենդանի օրգանիզմների տարատեսակություն, որը ներառում է բազմազանությունը տեսակի շրջանակներում, տեսակների միջև և էկոհամակարգերի բազմազանությունը.

Երկրաբանական ուսումնասիրություններ՝ ընդերքի երկրաբանական աշխատանքների համալիր, որի նպատակն է ուսումնասիրել երկրակեղևի կառուցվածքը, ապարների առաջացման պայմանները, արտածին երկրաբանական պրոցեսները, հրաբխային գործունեությունը, ինչպես նաև հայտնաբերել ու գնահատել օգտակար հանածոների պաշարները.

Բնապահպանական կառավարման պլան՝ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում.

Բնության հուշարձան, բնության հատուկ պահպանվող տարածքի կարգավիճակ ունեցող գիտական, պատմամշակութային և գեղագիտական հատուկ արժեք ներկայացնող երկրաբանական, ջրաերկրաբանական, ջրագրական, բնապատմական, կենսաբանական բնական օբյեկտ.

Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձաններ՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային եւ բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման սույն հայտը կազմվել է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության որոշումների պահանջներին համապատասխան:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

Գործունեության անվանումն է՝ ՀՀ Սյունիքի մարզի Շենաթաղ բնակավայրի ածխաթթվային հանքային ջրի թիվ 1 աղբյուրի ածխաթթվային հանքային ջրի արդյունահանում:

Նպատակն է՝ ածխաթթվային հանքային ջրի արդյունահանում, թիվ ՇԱԹՎ-29/390 թույլտվության գործողության ժամկետի 20 տարով երկարաձգումով:

Ածխաթթվային հանքային ջրի թիվ 1 աղբյուրի կոորդինատները CK-42 կոորդինատային համակարգում հետևյալն են.

$$x = 4362185$$

$$y = 8597725$$

1.2. Նախատեսվող գործունեության բնութագիրը

«Արսեն և Ներսես» ՍՊԸ-ն հանքային ջրերի արդյունաբերական շաղցում է իրականացնում ՀՀ Սյունիքի մարզի Շենաթաղ բնակավայրի ածխաթթվային հանքային ջրի թիվ 1 աղբյուրից՝ համաձայն 18.01.2013թ. ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության տրամադրած արդյունահանման թույլտվության՝ ՇԱԹՎ-29/390 և ընդերքօգտագործման պայմանագրի՝ ՊՎ-390, որի գործողության ժամկետն ավարտվում է 17.11.2021թ.: Ընկերության տրամադրված հանքային ջրի ջրաքանակը կազմել է՝ 620.5մ³/տարի, որը ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 30.04.2014թ-ի 58-Ա հրամանով փոխարինվել է 3000մ³/տարի ջրաքանակով:

«Արսեն և Ներսես» ՍՊԸ-ն սահմանված կարգով դիմել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ ՀՀ Սյունիքի մարզի Շենաթաղ բնակավայրի ածխաթթվային հանքային ջրի թիվ 1 աղբյուրի արդյունահանման թույլտվության գործողության ժամկետը երկարաձգելու համար:

Ընկերությունը երկարաձգելով ՀՀ Սյունիքի մարզի Շենաթաղ բնակավայրի ածխաթթվային հանքային ջրի թիվ 1 աղբյուրի արդյունահանման իրավունքն՝ արդյունաբերական շաղցման նպատակով, և իրականացնելով այն, կշարունակի ապահովել շուկայի ավելացող պահանջարկը, կպահպանի գոյություն ունեցող աշխատատեղերը՝ նպաստելով Շենաթաղի համայնքի բնակչության սոցիալական

պայմանների և կենսամակարդակի բարելավմանը: Բացի դրանից, ընկերությունը պատրաստ է յուրաքանչյուր տարի աջակցություն ցուցաբերել համայնքի կարիքների բավարարման համար:

Ընկերության կողմից պահանջվող հանքային ջրի ջրաքանակը կազմում է 3000մ³/տարի:

Ընկերությունն շշալցված հանքային ջուրը իրացնելու է Հայաստանի Հանրապետությունում:

Ընկերությունը խնդրում է արդյունաբերական շշալցում նպատակով հանքային ջրի արդյունահանման թույլտվության գործողության ժամկետը երկարաձգել 20 տարի ժամկետով՝ մինչև 2041թվականը:

Ընկերությունը հանքային ջրից շշալցման գործընթացը մինչ օրս իրականացնում է ՀՀ Սյունիքի մարզի Շամբի լիմոնադի գործարանում:

Ջրհավաք ածխաթթվային հանքային ջրի թիվ 1 աղբյուրից դեպի շշալցման գործարան հանքային ջրի տեղափոխումն իրականացվում է խմելու որակի չժանգոտվող պողպատից պատրաստված ցիստեռնով:

Հանքային ջրի հանքավայրի արդյունավետ շահագործման և արտադրության կազմակերպման համար ընկերությունը համալրված է բազմափորձ մասնագետներով: Ընկերությունը տարածքաշրջանի ջրերի շուկայի առաջատարներից է, որն իր գործունեության առաջին իսկ օրվանից ընտրել է դինամիկ զարգացման ուղի և սպառողների պահանջների ու սպասելիքների բավարարման սկզբունքին հավատարիմ մնալով մշտապես ապահովել է բարձր որակ՝ տարեցտարի առաջարկելով առավել թարմացված և որակյալ ապրանքատեսականի:

Ընկերությունում ստեղծված են ժամանակակից արտադրությանը ներկայացվող բոլոր պահանջներին բավարարող արտադրական պայմաններ ու մշտապես իրականացվում են բարեփոխման ու բարելավման գործընթացներ:

Ընկերությունը՝ հավատարիմ լինելով կորպորատիվ և սոցիալական պատասխանատվության սկզբունքներին նախորդ 10 տարիների ընթացքում կատարել է համայնքին ուղղված միջոցառումների շարք: Բարձր գնահատելով համայնքի դերը գործարանի զարգացման մեջ՝ ընկերությունը պատրաստակամ է շարունակել իր կորպորատիվ և սոցիալական քաղաքականությունը, համայնքի զարգացմանը տարեկան տրամադրելով մինչև մեկ միլիոն դրամ:

1.3 Նախագծման նորմատիվ-իրավական հիմքը

«Արսեն և Ներսես» ՍՊԸ-ն իր գործողություններում առաջնորդվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության այն պահանջներով, որոնք առնչվում են հանքարդյունահանման ոլորտին և շրջակա միջավայրի պահպանությանը:

2012թ-ին Հայաստանի Հանրապետության Ընդերքի մասին նոր օրենսգրքի ընդունմամբ հիմք դրվեց մի շարք նոր ընթացակարգերի, որոնց թվին պատկանում է նաև

երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում բնության և շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի կազմումը:

Շրջակա միջավայրի համար կայուն/անվտանգ և սոցիալապես ընդունելի նախնական գնահատման հայտը պետք է անդրադառնա բնապահպանական բոլոր ասպեկտներին և պետք է կազմվի ՀՀ բնապահպանական բնագավառի իրավական ակտերով սահմանված պահանջների և նորմերի հաշվառմամբ:

Այդպիսի նորմատիվ պահանջներ ներկայացված են հետևյալ իրավական ակտերում.

- ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (ՀՕ-280, 28.11.2011թ.), որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

- ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

- ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

- Բուսական աշխարհի մասին ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

- Կենդանական աշխարհի մասին ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:

- Մթնոլորտային օդի պահպանության մասին ՀՀ օրենք (ՀՕ-121, 11.10.1994թ.), որի առարկան մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների կարգավորումն է:

- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենք (ՀՕ-110, 21.06.2014թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում

շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:

- ՀՀ բնապահպանության նախարարի 24.12.2012թ.-ի թիվ 365-Ն հրամանը, որով կարգավորվում են շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին ընդերքօգտագործողների կողմից նախատեսված ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և ինդեքսավորման կարգի հետ կապված իրավահարաբերությունները:

- ՀՀ կառավարության 10.01.2013թ.-ի թիվ 22-Ն որոշում, որով սահմանվել են օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, դրանց իրականացման վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգերը:

- ՀՀ կառավարության 5 հոկտեմբերի 2017 թվականի N 1267-Ն որոշում, որը կիրառվում է բնօգտագործման վճար վճարող ջրօգտագործողների կողմից ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների և արտադրված ածխաթթու գազի հաշվառման նպատակով ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի, գազաչափերի տեղադրման և կնքման, ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների և արտադրված ածխաթթու գազի ծավալների վերաբերյալ տվյալների արձանագրման կարգերը և ժամկետները սահմանելու ժամանակ:

- ՀՀ կառավարության 22 նոյեմբերի 2012 թվականի N 1484-Ն որոշում, որը սահմանում է ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրերի շահագործման ժամանակ անհրաժեշտ ռեժիմային դիտարկումների իրականացումը, որը կապահովի ջրային ռեսուրսները սպառումից և աղտոտումից պահպանելը:

- «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման իրավական, տնտեսական և կազմակերպական հիմքերը:

- ՀՀ կառավարության 22 փետրվարի 2018 թվականի N 191-Ն որոշում, որը կարգավորում է ընդերքօգտագործողների կողմից ընդերքօգտագործման հետևանքով (բացառությամբ ընդերքօգտագործման թափոնների օբյեկտներում) բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների (այսուհետ՝ մշտադիտարկում) իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ ընդերքի օգտագործման հետ կապված շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնին (այսուհետ՝ լիազոր մարմին) եռամսյակային կտրվածքով հաղորդումները, տարեկան հաշվետվությունները

ներկայացնելու և ընդերքօգտագործողի էլեկտրոնային կայքում տեղադրելու հետ կապված հարաբերությունները:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2.1 Նախատեսվող գործունեության գտնվելու վայրը

Հանքային աղբյուրի շրջանը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի տարածաշրջանում, որն ամենամեծն է հանրապետությունում և գրավում է 1718քառ.կմ մակերես:

Սյունիքի մարզում բացի Շենաթաղ գյուղից կան նաև 7 քաղաքներ և 130 գյուղական բնակավայրեր:

Սիսիանի տարածաշրջանում կան 35 բնակավայրեր, որոնցից ամենամեծերն են Սիսիանը, Դաստակերտը և մի քանի գյուղեր :


Շրջանի բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է :

Շենաթաղի թիվ 1 ածխաթթվային հանքային ջրի աղբյուրը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի տարածաշրջանի Շենաթաղ բնակավայրի տարածքում, Շենաթաղ գետի կիրճում, նրա աջ ափին, Երևան քաղաքից 230կմ հեռավորության վրա: Աղբյուրը գտնվում է Շենաթաղ գյուղից 0.35կմ դեպի հյուսիս 1730մ բացարձակ բարձրության վրա, ճանապարհից շուրջ 18մ հեռավորության վրա : Աղբյուրից շուրջ 80մ հեռավորության վրա գտնվում են գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության հողեր, մոտակա վարելահողը գտնվում է շուրջ 35մ հեռավորության վրա: Հանքային աղբյուրի անմիջական ազդեցության գոտում բնապահպանական և պատմամշակութային հուշարձաններ, անտառային և բնապահպանական տարածքներ, ինչպես նաև այլ զգայուն կլանիչներ բացակայում են :

Աղբյուրի կոորդինատներն են՝

Հյուս. լայն. 39°23'14.7''

Արև. երկ. 46°07'59.7''



Հանքային աղբյուրի իրադրային սխեման





Հնդհանուր տեսքը

2.2 Ռելիեֆը, երկրաձևաբանությունը

Միսիանի տարածաշրջանը տարածվում է մասամբ հարավային ծալքաբեկորավոր լեռնաշղթաների և միջլեռնային գոգավորությունների, մասամբ էլ հրաբխային լեռնավահանների և սարավանդների մարզերի սահմաններում: Այս տարածաշրջանը բարձրաբերձ լեռների, անդնդախոր ձորերի, արագահոս գետերի, թավիշ կանաչով պատված սարավանդների երկիր է:

Հյուսիսում ձգվում է Վարդենիսի լեռնավահանը, արևմուտքում՝ Զանգեզուրի լեռնաշղթան, իսկ արևելքում Սյունիքի հրաբխային բարձրավանդակը:

Լեռնագրական առումով հանքավայրի շրջանը համարվում է մասնատված ռելիեֆով տիպիկ լեռնային շրջան:

Տեղանքի հարաբերական վերազանցումը հասնում է մինչև 1600մ: Կազմաբանական տարբեր ձևերի հիման վրա տեղանքի լանդշաֆտը բաժանվում է բարձրալեռնային և լեռնահարթավայրային տիպերի:

Լեռնահարթավայրային լանդշաֆտը տարբերվում է առաջին տիպից աննշան հարաբերական վերազանցումներով (մոտ 1000մ), և ռելիեֆի սակավ կտրուկ ձևերով:

Լեռնագրական տեսակետից շրջանը բնութագրվում է խիստ զարգացած բարձրադիր լեռնաշղթաներով, մեղմ անկումով լավային սարավանդերով և իջվածքներով:

Հարավային սահմանով ձգվում է Զանգեզուրի լեռնաշղթան Միսկատար (3043.6մ), Սալվարդ (3161.5մ) և Զամալ (3204.3մ) բարձունքներով: Շրջանի ծայր հարավ-արևմտյան մասում ճյուղավորվում է Բարգուշատի լեռնաշղթան Արամազդ (3399.2մ) և այլ գագաթներով:

Որպես հյուսիսային սահման է ծառայում Ղարաբաղի լեռնաշխարհի ջրբաժանի գիծը, որի առանձին գագաթները ունեն ավելի քան 3500մ բարձրություն: Հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք լեռնաշխարհը իջնելով վերածվում է մեղմ անկում ունեցող սարավանդների:

ՌԵԼԻԵՖԻ ՉԵՎԱԳՐԱԿԱՆ ՏԻՊԵՐ ԵՎ ՉԵՎԵՐ



Լեռներ

Բարձրլեռնային գոտի (2 800 մ և բարձր)




Չառիթափ, ուղիղ լանջերով, հովտաձորակային ցանցով խիտ ու խոր մասնատված

Միջինլեռնային գոտի (1 500-2 800 մ)




Չառիթափ, ուղիղ լանջերով, աստիճանակերպ կատարով, V-աձև հովիտներով և կիրճերով խոտ մասնատված

ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԻ ԳԵՐԱԿՇՈՒՂ ԹԵՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ



Տարածքը սողանքավտանգ չէ, հանքային աղբյուրի տարածքում սողանքային երևույթները բացակայում են, տեղամասի երկրաբանական կառուցվածքը բացառում է աղբյուրի շահագործման ընթացքում սողանքային երևույթների առաջացումը:

Համաձայն Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04_«Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»-ում տեղադրված ըստ սեյսմիկ գոտիների Հայաստանի Հանրապետության համայնքների ու բնակավայրերի ցանկի, Շենաթաղ գյուղը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, որին բնորոշ է 0.3g գրունտի առավելագույն հորիզոնական արագացումը:

Շենաթաղի ածխաթթվային հանքային ջրի աղբյուրի տեղամասի սահմաններում լեռնային ապարներն ըստ իրենց լիթոլոգիական կազմի, տեղադրման պայմանների և

հիդրոերկրաբանական նշանակության կարելի է առանձնացնել երկու հիմնական կոմպլեքսներ.

1. Կայնոգոյի նստվածքային հրաբխածին-նստվածքային և ինտրուզիվ ապարներ,
2. Չորրորդական հասակի դելյուվիալ, դելյուվիալ-պրոյուվիալ և ալյուվիալ նստվածքներ :

Կայնոգոյի առաջացումները տեղամասում ունեն մեծ տարածում : Միջին էոգենի տարատեսակ պորֆիրիտները, տուֆափշրաքարերը և տուֆերը մերկանում են Շենաթաղ գյուղից հարավ-արևմուտք և ունեն սահմանափակ տարածում :

Վերին պլիոցենի հասակի ապարները ներկայացված են դիատոմիտային կավերով, կավավազներով, որոնք մերկանում են Լծեն-Դարբաս-Լոր գյուղերի գծով, Շենաթաղ գետի աջ ափին : Շենաթաղ գյուղի հյուսիսային ծայրամասում հորատված 25մ խորության N 128 և N 121 հորատանցքերը 5մ-ից կտրել են քվարցային պորֆիրիտները:

Տեղամասում մեծ տարածում ունեն վերին օլիգոցենի ստորին միոցենի հասակի ինտրուզիվ ապարները, որոնք ներկայացված են քվարցային դիորիտներով, գրանոդիորիտներով, գաբբո-դիորիտներով և դիորիտներով :

Շենաթաղ գյուղից և թիվ 1 հանքային աղբյուրից արևելք լեռնալանջերի ստորոտներում նկատվում են հիդրոթերմալ փոփոխված ապարների մերկացումներով :

Ամենայն հավանականությամբ Շենաթաղ գետով անցնում է խախտում, որի հետևանքով երկու փուլով տեղադրված են ինտրուզիվ ապարներ : Խախտման առկայությամբ է բացատրվում նաև հանքային աղբյուրների առկայությունը : Տեկտոնական խախտման հետևանքով ապարները խիստ ճեղքավորված են :

Տեղամասում ժամանակակից և չորրորդական հասակի դելյուվիալ, դելյուվիալ-պրոյուվիալ, պրոյուվիալ, և ալյուվիալ նստվածքները ներկայացված են տարահատիկ ավազներով, կավավազներով, խճով, մանրախճով, գլաքարերով, որոնք զարգացած են Շենաթաղ գետի և նրա վտակների ողողահունում, տեռասաններում, արտաբերման կոներում և սարալանջերին:

Ժամանակակից և չորրորդական հասակի ապարների հզորությունը տեղամասում չի գերազանցում 5մ, երբեմն 10-12մ :

ՀՀ Սյունիքի մարզի Շենաթաղ բնակավայրի ածխաթթվային հանքային ջրի թիվ 1 աղբյուրի շահագործական պաշարները հաստատել են ՀՀ էներգետիկայի և բնական

պաշարների նախարարության աշխատակազմի ՕՀՊ գործակալության կողմից 2009թ-ի հուլիսի 21-ի թիվ 221 որոշմամբ, հետևյալ կարգերով և քանակներով.

В կարգ՝ 1.3լ/վրկ կամ 114.2մ³/օր

С₁ կարգ՝ 0.1լ/վրկ կամ 8.7մ³/օր

Ընդամենը՝ В+С₁ կարգերով՝ 1.4լ/վրկ կամ 122.9մ³/օր :

2.3 Կլիմա

Միսիանում ձմեռը երկարատև է: Կայուն ձյան շերտը պահպանվում է 3-4 ամիս: Հունվարի միջին ջերմաստիճանը -4.8 °С, միջին տարեկանը՝ 6.9 °С, բացարձակ նվազագույնը՝ -34 °С:

Ձմռան եղանակային ռեժիմը բնութագրվում է որպես կայուն և շատ կայուն: Ձմեռային եղանակներն առանձնանում են արևոտությամբ և անհողմ օրերի զգալի քանակով: Թթվածնի կշռային քանակությունն առավելագույնն է՝ 254 գ/մ³: Գերակշռում են «չափավոր սառնամանիքային» (երբ օդի միջին ջերմաստիճանը -12.5 °С) և զգալի սառնամանիքային (երբ օդի միջին օրական ջերմաստիճանը -21.5 °С) եղանակները:

Գարունը զով է, երկարատև (2-3 ամիս), չափավոր սառը: Սկսվում է գարունն ապրիլի երկրորդ կամ երրորդ տասնօրյակից և վերջանում է հունիսի երկրորդ կամ երրորդ տասնօրյակում: Մայիսն ամենաանձրևային ամիսն է, ամսական տեղումների քանակը տատանվում է 70-100 մմ:

Ամառը չափավոր տաք է, տևում է 2-3 ամիս, գերակշռում են պարզ եղանակները: Հուլիսի միջին ջերմաստիճանը 17.9 °С, բացարձակ առավելագույնը հասնում է 36 °С: Տարեկան տեղումների քանակը տատանվում է 25-56 մմ: Ամառը որոշակի տարիներին լինում է չորային եղանակ: Ամառը չափավոր տաք է, տևում է 2-3 ամիս, գերակշռում են պարզ եղանակները: Հուլիսի միջին ջերմաստիճանը 17.9 °С, բացարձակ առավելագույնը հասնում է 36 °С: Տարեկան տեղումների քանակը տատանվում է 25-56 մմ: Ամառը որոշակի տարիներին լինում է չորային եղանակ: Ամռանը գերակշռում են «արևոտ, չափավոր խոնավ» եղանակային տիպը՝ 16 օր ամսվա ընթացքում: Իսպառ բացակայում է «շատ շոգ և շատ չոր» եղանակային տիպը, ինչը դրական է գնահատում Միսիանի ամառային եղանակային ռեժիմը:

Աշունը զով է: Առաջին աշնանային ցրտահարությունները լինում են հոկտեմբերի առաջին և երկրորդ տասնօրյակներում, երբեմն սեպտեմբերի առաջին տասնօրյակում: Անսառնամանիք օրերի թիվը կազմում է 120-180 օր: Աշունը բնութագրվում է որպես կայուն, արևոտ, անհողմ: Թթվածնի պարունակությունը մթնոլորտում 240 գ/մ³:

Կլիմայական առումով, հանքավայրի շրջանը բնորոշ է չափավոր ցուրտ ձմեռով, ձմռան միջին ջերմաստիճանը կազմում է -15 - 20°, իսկ ամառվա ամիսներին +25-+30°С:

Տարեկան տեղումների միջին քանակը կազմում է հարթավայրերում 600մմ, նախալեռնային շրջաններում - 500մմ, իսկ ջրբաժան շրջաններում մինչև 700մմ: Ջրբաժաններում ձյունը մնում է 7-8 ամիս, իսկ նախալեռններում 4-5 ամիս:

Օդի ջերմաստիճանը

Օդ. կայանի անվանումը	Բարձ.ծովի մակարդակից. մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների.°C												Միջին տար. °C	Բաց. նվազ. °C	Բաց. առավ. °C
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Սիսիան	1580	-4.5	-3.0	0.9	6.8	11.4	15.0	18.0	17.8	14.0	8.6	2.7	-2.2	7.1	-34	36
Սիսիանի Լ-ք	2380	-8.2	-7.5	-4.3	1.3	6.3	9.9	12.7	12.8	9.9	4.7	-1,0	-5.9	2.6	-26	31

Օդի հարաբերական խոնավությունը

Օդ. կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %														
	ըստ ամիսների.												Միջին տար. %	Միջին ամսական ժամը 15-ին	
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII		Ամեն. ցուրտ ամսվա %	Ամենա շոգ ամսվա, %
1	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Սիսիան	71	71	71	70	71	69	65	65	70	71	73	72	70	59	45
Սիսիանի Լ-ք	81	83	83	77	76	77	76	72	71	71	76	81	77	81	53

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը.

Օդ. կայանի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական օրական առավելագույն , մմ												Ձնածածկույթ			
	ըստ ամիսների.												Տար-կան	Առավ տասնօրյ ա բարձ- ը, սմ	Տարվա ձն ածածկույթ ոլորների քան-ը	Չյան մեջ ջրի առավե- լագույն քանակը, մմ
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII				
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Սիսիան	18	22	36	57	73	57	27	16	23	37	30	18	36	67	90	
	26	20	22	37	38	47	54	39	29	35	32	22				
Սիսիանի Լ-ք	53	64	77	101	102	71	43	26	36	64	56	64	214	157	720	
	23	37	27	91	50	41	48	34	31	47	41	45				

Քամիները.

Բնակ-վայր	Միջին տարեկան մթնոլորտային ձնածածկ (սմ)	Ամիսներ	Կրկնեկությունը, %								Անհոդմո-թյունների	Խ/Վ մարմնական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ «ո» տարիների ընթացքում		
			Միջին արագությունը, մ/վ													20	50	100
			Հյուսիսային	Հյուսիս-Արևելյան	Արևելյան	Հարավ-Արևմտյան	Հարավ	Հարավ-Արևմտյան	Արևմտյան	Հյուսիս-Արևմտյան						20	50	100
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	
Միսիսիսն	841,5	հունվար	8	1	14	2	2	2	26	45	56	1,9	2,2	2	20	21	22	
			3,5	2,6	3,6	2,5	2,5	3,5	3,6	3,9								
		ապրիլ	4	2	36	6	2	6	25	19	55	2,0						
			3,4	3,2	4,1	3,7	3,4	4,0	3,6	3,9								
		հուլիս	1	1	79	16	0	1	1	1	45	3,1						
			3,1	4,4	5,0	4,5	3,6	3,7	3,3	3,0								
հոկտեմբեր	2	2	53	7	2	6	20	8	65	1,6								
	2,7	2,8	4,2	3,2	2,9	3,9	3,7	3,8										

Անարև օրերի քանակը

Բնակ-ի, օդ-ական կայանի անվանումը	ըստ ամիսների												Տար- ն
	Հուն	Փետ	Մարտ	Ապր	Մայ	Հուն	Հուլ	Օգոս	Սեպ	Հոկ	Նոյ	Դեկ	
Սիսիան	4	3	3	2	1	0,1	0,2	0,1	0,4	2	3	4	23

Արևափայլի տնտրությունը

[illegible]



2.4 Մթնոլորտային օդ

ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից:

Կապան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի և ծծմբի երկօքսիդների որոշման համար դիտարկումներն իրականացվել են 11 շաբաթական դիտակետում (պասիվ նմուշառում): Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 504 փորձանմուշ:

2020թ. քաղաքի մթնոլորտի աղտոտվածությունը (ըստ մթնոլորտի աղտոտող 2 նյութերի) միջինից ցածր մակարդակի է՝ մթնոլորտի աղտոտվածության ցուցանիշը 0.60 է (ծծմբի երկօքսիդ՝ 0.46, ազոտի երկօքսիդ՝ 0.14): Որոշված նյութերի տարեկան միջին կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹՎ-ները:

Կապան քաղաքի մթնոլորտային օդում որոշված նյութերի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



Աղբյուրի տարածքը գտնվում է բնակավայրերից հեռու, այստեղ չկան գործող արդյունաբերական և խոշոր գյուղատնտեսական ձեռնարկություններ, համապատասխանաբար օդային ավազանը չի կրում անտրոպոգեն զգալի ազդեցություն:

Աղբյուրի տարածքում մշտական դիտակայաններ կամ պասիվ նմուշառիչներ չեն տեղադրված և օդային ավազանի աղտոտվածության վերաբերյալ տվյալներ չկան:

Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ անալիտիկ եղանակով: Դրա համար «Էկոմոնիթորինգ»-ը առաջարկում է համապատասխան ձեռնարկ-ուղեցույց:

Ըստ ուղեցույցի, մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար, որոնց թվին է դասվում Շենաթաղ համայնքը, օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են՝

- Փոշի՝ 0.2 մգ/մ^3 ;
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ^3 ;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ^3 ;
- Ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ^3 :

2.5 Աղմուկի մակարդակ

Հանքային ջրի աղբյուրի տարածքում աղմուկի աղբյուր կարող են հանդիսանալ միայն ավտոտրանսպորտային միջոցները, սակայն քանի որ դրանց ինտենսիվությունը շատ ցածր է, կարելի է ենթադրել, որ աղմուկի մակարդակը նույնպես բարձր չէ:

Հաշվի առնելով հանքավայրի հեռավորությունը բնակավայրերից, գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը գյուղի տարածքում կգտնվի նորմայի սահմաններում (նորման 45դԲԱ):

2.6 Ջրային ռեսուրսներ

Շրջանի հիմնական ջրային զարկերակը հանդիսանում է Որոտան գետը:

Որոտան գետը Սյունիքի մարզի ամենախոշոր գետն է: Այն Արաքսի ձախակողմյան վտակներից է և իր երկարությամբ երկրորդն է երկրում:

Հայաստանի Հանրապետության սահմաններում նրա երկարությունը կազմում է 119կմ, ջրահավաք ավազանը՝ 2170 կմ^2 , իսկ ջրահավաք ավազանի միջին բարձրությունը 2280 մետր: Որոտանը սկիզբ է առնում Սյունիքի հրաբխային բարձրավանդակի հյուսիս-արևմտյան լանջերից՝ 3045 մ բարձրության վրա գտնվող երկու փոքրիկ լճերից:

Որոտան գետի ջրերի որակի էկոլոգիական նորմերը բերված են աղյուսակ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՈՐԱԿԻ ՆՈՐՄԵՐԸ
ՈՐՈՏԱՆ ԳԵՏԻ ԳԵՏԱՎԱԶԱՆԻ ԳԵՏԵՐԻ ՋՐԵՐԻ ՈՐԱԿԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ**

<i>Որակի ցուցանիշներ</i>	Որակի դաս					Մ իավոր
	I	II	III	IV		
Լուծված թթվածին	>7	>6	5	>4	4	մգ O ₂ /լ
ԹԿՊ ₅	3	5		18	18	մգ O ₂ /լ
ԹԲՊ-Cr	10	25	0	80	80	մգ O ₂ /լ
Ամոնիում իոն	0.390	0.4	.2	2.4	2.4	մգ N/լ
Նիտրիտ իոն	0.007	0.06	.12	0.3	0,3	մգ N/լ
Նիտրատ իոն	0.328	2.5	.6	11.3	11,3	մգ N/լ
Ֆոսֆատ իոն	0.050	0.1	.2	0.4	0,4	մգ /լ
Ցինկ, ընդհանուր	2.0	100	00	500	500	մկ գ/լ
Պղինձ, ընդհանուր	2.0	22.0	0	100	100	մկ գ/լ
Քրոմ, ընդհանուր	0.5	10.5	00	250	250	մկ գ/լ
Արսեն, ընդհանուր	0.56	20	0	100	100	մկ գ/լ
Կադմիում, ընդհանուր	0.01	1.01	.01	4.01	4,01	մկ գ/լ
Կապար, ընդհանուր	0.14	10.14	5	50	50	մկ գ/լ
Նիկել, ընդհանուր	0.45	10.45	0	100	100	մկ գ/լ
Մոլիբդեն, ընդհանուր	1	2		8	8	մկ գ/լ
Մանգան, ընդհանուր	4	8	6	32	32	մկ գ/լ
Վանադիում, ընդհանուր	8	16	2	64	64	մկ գ/լ
Կոբալտ, ընդհանուր	0.14	0.28	.56	1.12	1.12	մկ գ/լ
Երկաթ, ընդհանուր	0.08	0.16	.5	1	1	մգ /լ
Կալցիում	6.4	100	00	300	300	մգ /լ
Մագնեզիում	2	50	00	200	200	մգ /լ
Բարիում	6	12		1000		մկ

			4		1000	գ/լ
Բերիլիում	0.027	0.054	.108	100	100	գ/լ մկ
Կալիում	2.23	4.46	.92	17.84	17,84	լ մգ
Նատրիում	4.23	8.46	6.92	33.84	33.84	լ մգ
Լիթիում	2	2		<2500	2500	գ/լ մկ
Բոր	4	450	00	1000	2000	գ/լ մկ
Ալյումին	142	284	68	5000	5000	գ/լ մկ
Սելեն, ընդհանուր	0.34	20	0	80	80	գ/լ մկ
Ծարիր, ընդհանուր	0.25	0.5		2	2	գ/լ մկ
Անագ, ընդհանուր	0.08	0.16	.32	0.64	0,64	գ/լ մկ
ԹՔՊ-Mn	1	10	5	20	20	oz /լ մգ
Ընդհանուր անօրգանական ազոտ	0.271	4		16	16	N/լ մգ
Ընդհանուր ֆոսֆոր	0.078	0.2	.4	1	1	լ մգ
Քլորիդ իոն	4	8	50	200	200	լ մգ
Սուլֆատ իոն	8.51	17.02	50	250	250	լ մգ
Սիլիկատ իոն	11.82	23.64	7.28	94.56	94.56	Si/լ մգ
Ընդհանուր հանքայնացում	55	110	000	1500* *ռոռզման համար 1000	1500	լ մգ
Էլեկտրահաղորդականություն	81	162	000	1500* *ռոռզման համար 1000	1500	Սիմ/սմ մկ
Կոշտություն	0.5	10	0	40	40	լ մգ էկվ/լ
Կախված մասնիկներ	4.6	5.5	.2	18.5	18.5	լ մգ
Հոտ (20°C and 60°C)	<2 (բնական)	2 (բնական)		4	4	ալ Բ
Գույն	(բնական)	<5 (բնական)	0	30	200	ստիճան ա

Որոտանն ունի զարգացած գետային ցանց, միջին խտությունը կազմում է 1.09 կմ/կմ²: Նրա ավազանում կան 1133 գետակներ, որոնցից 37-ը ունեն 10 կմ-ից ավել երկարություն: Կարևորագույն վտակներից են Սիսիանը, Գորիսգետը, Այրիգետը, Շաքին և այլն:

Որոտանի սնումը ձնանձրևային է (52%), սակայն մեծ դեր ունեն նաև ստորերկրյա ջրերը, որոնց բաժինը գետի հոսքում կազմում է 48 %:

Որոտանի ջրային ռեժիմը բնորոշվում է գարնանային հոսքի գերակայությամբ՝ ամառային երբեմնակի վարարումներով: Հորդացումը տևում է ապրիլից մինչև հունիս, իսկ առավելագույնին հասնում է մայիսին:

Գետի միջին տարեկան ծախսը կազմում է 21,5 մ³/վ, իսկ տարեկան հոսքի ծավալը՝ 677,3 մլն մ³:




Որոտան գետը ունի մեծ ջրաէներգետիկ և ոռոգիչ նշանակություն: Նրանից սկսվում են Սիսիանի և Որոտանի ջրանցքները, որոնցով ոռոգվում են Սիսիանի և Գորիսի տարածաշրջանների գյուղատնտեսական հողահանդակները:




Շենաթաղի թիվ 1 անխաթթվային հանքային ջրի աղբյուրը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի տարածաշրջանի Շենաթաղ գետի կիրճում, նրա աջ ափին, նրա հունից 10մ արևելք :

Ստորև ներկայացվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հրապարակված տվյալները Հարավային ջրավազանային կառավարման տարածքի մասով:

Մակերևութային ջրերի որակի 2021թ. ապրիլ ամսվա մոնիթորինգի տվյալները

Հարավային ջրավազանային կառավարման տարածք





Ջրամբարների ջրի որակը 2020թ. 4-րդ եռամսյակում.

Հոկտեմբեր 2020

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
	ջրատար	հարավ-արևելք (68)	Մանգան	5-րդ	
Արարատյան	Արփա	0.5 կմ ք. Ջերմուկից վերև (83)	Երկաթ, ալյումին	3-րդ	3-րդ
		0.5 կմ ք. Վայքից վերև (84)	Մոլիբդեն, Երկաթ, կալիում, ԿՆ	3-րդ	4-րդ
			Մանգան	4-րդ	
		0.5 կմ ք. Վայքից ներքև (85)	Մոլիբդեն, Երկաթ, կալիում, ծարիր	3-րդ	3-րդ
		0.5 կմ ք. Եղեգնաձորից վերև (86)	Մանգան, Երկաթ, ծարիր	3-րդ	4-րդ
			Մոլիբդեն	4-րդ	
		0.5 կմ գյ. Արենիից ներքև (87)	Երկաթ, կալցիում, սուլֆատ իոն	3-րդ	4-րդ
			Մոլիբդեն	4-րդ	
	Դարբ	Ակունք (348)	Մոլիբդեն, մանգան, Երկաթ	3-րդ	4-րդ
			Ալյումին	4-րդ	
		Գետաբերան (349)	Մոլիբդեն, Երկաթ	3-րդ	3-րդ
	Եղեգիս	0.5 կմ գյ. Շատինից ներքև (88)	Մոլիբդեն, կոբալտ, կալիում, բոր	3-րդ	5-րդ
			Մանգան, Երկաթ, ալյումին	4-րդ	
			ԿՆ	5-րդ	
	Սպանդարյան-Կեչուտ ջրատար	Սպանդարյան-Կեչուտ ջրատարի ելքից (353)	Մոլիբդեն, սուլֆատ իոն	3-րդ	4-րդ
			Երկաթ, ընդհանուր ֆոսֆոր	4-րդ	
Հարավային	Որոտան	0.5 կմ գյ. Գորայքից վերև (99)	-	2-րդ	2-րդ
		3 կմ ք. Սիսիանից վերև (100)	Մանգան, Երկաթ, ալյումին	3-րդ	3-րդ
		6 կմ ք. Սիսիանից ներքև (101)	Երկաթ, ալյումին	3-րդ	4-րդ
			Մանգան	4-րդ	
Հարավային	Որոտան	0.5 կմ գյ. Տաթև ՀԷԿ-ից ներքև (102)	Երկաթ	3-րդ	4-րդ
			Մանգան	4-րդ	
	Վարարակ	0.5 կմ ք. Գորիսից վերև (106)	Ամոնիում իոն, կոբալտ, բերիլիում, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
			Մանգան, Երկաթ, ալյումին	4-րդ	

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
			ԿՆ	5-րդ	5-րդ
		1.5 կմ Գորիսից ներքև (107)	Մոլիբդեն, մանգան, կադցիում, ԼԱԱ, ԿՆ	3-րդ	
			Նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր	4-րդ	
			Ամոնիում իոն	5-րդ	

2-րդ դաս՝ «լավ» որակ 3-րդ դաս՝ «միջակ» որակ 4-րդ դաս՝ «անբավարար» որակ 5-րդ դաս՝ «վատ» որակ

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Սևան	Գավառագետ	Գետաբերան (78)	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, մոլիբդեն, երկաթ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
			Վանադիում	5-րդ	
	Արփա-Սևան ջրատար	0.7 կմ գյ. Ծովինարից հարավ-արևելք (68)	Մանգան, երկաթ	3-րդ	3-րդ
Արարատյան	Վեղի	0.5 կմ գյ. Ուրցաձորից վերև (80)	-	2-րդ	2-րդ
	Արփա	0.5 կմ ք. Ջերմուկից վերև (83)	-	2-րդ	2-րդ
		0.5 կմ ք. Վայքից վերև (84)	ԹՔՊ, մոլիբդեն, մանգան, երկաթ	3-րդ	3-րդ
		0.5 կմ ք. Վայքից ներքև (85)	Մոլիբդեն, երկաթ, բարիում, ծարիր	3-րդ	3-րդ
		0.5 կմ ք. Եղեգնաձորից վերև (86)	ԹՔՊ, մոլիբդեն, մանգան, բարիում, ծարիր	3-րդ	3-րդ
		0.5 կմ գյ. Արենիից ներքև (87)	Մոլիբդեն, երկաթ, բարիում, ծարիր	3-րդ	3-րդ
	Դարբ	Ակունք (348)	Մոլիբդեն, մանգան, երկաթ, կալիում, ալյումին	3-րդ	3-րդ
		Գետաբերան (349)	ԹՔՊ, մոլիբդեն, բարիում, կալիում	3-րդ	3-րդ
	Եղեգիս	0.5 կմ գյ. Շատինից ներքև (88)	Մոլիբդեն, ծարիր	3-րդ	3-րդ
	Սպանդարյան-Կեչուտ ջրատար	Սպանդարյան-Կեչուտ ջրատարի ելքից (353)	Ֆոսֆատ իոն, մոլիբդեն, երկաթ, բարիում, ընդհանուր ֆոսֆոր, սուլֆատ իոն	3-րդ	3-րդ
Հարավային	Որոտան	0.5 կմ գյ. Գորայքից վերև (99)	-	2-րդ	2-րդ
		3 կմ ք. Սիսիանից վերև (100)	Երկաթ	3-րդ	5-րդ
			Մանգան	5-րդ	
		6 կմ ք. Սիսիանից ներքև (101)	Երկաթ, բարիում	3-րդ	5-րդ
			Մանգան	5-րդ	

Ջրավազանային կատարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Հարավային	Որոտան	0.5 կմ գ. Տաթն ՀԷԿ-ից ներքև (102)	Մոլիբդեն, էրկաթ, բարիում	3-րդ	5-րդ
			Մանգան	5-րդ	
	Սիսիան	Գետաբերան (104)	Մանգան, վանադիում, ալյումին	3-րդ	4-րդ
			Մոլիբդեն	4-րդ	
	Վարարակ	0.5 կմ ք. Գորիսից վերև (106)	Երկաթ	3-րդ	5-րդ
			Մանգան, ալյումին	4-րդ	
			ԿՆ	5-րդ	
		1.5 կմ Գորիսից ներքև (107)	ԹՔՊ, մոլիբդեն, կոբալտ, կալցիում, բարիում, կալիում, ալյումին, ՀԱԱ	3-րդ	5-րդ
			Նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, մանգան, ընդհանուր ֆոսֆոր	4-րդ	
			Ամոնիում իոն, ԿՆ	5-րդ	

2-րդ դաս՝ «լավ» որակ, 3-րդ դաս՝ «միջակ» որակ, 4-րդ դաս՝ «անբավարար» որակ, 5-րդ դաս՝ «վատ» որակ

2.7 Հողային ծածկույթ

Հող, բնական գոյացություն՝ կազմված ծագումնաբանորեն իրար հետ կապված հորիզոններից, որոնք ձևավորվել են երկրի կեղևի մակերեսային շերտերի վերափոխման հետևանքով՝ [զրի](#), [օղի](#) և կենդանի օրգանիզմների ներգործության շնորհիվ:

Հողը երկրակեղևի մակերեսային փխրուն շերտն է, որը փոփոխվում է մթնոլորտի և օրգանիզմների ազդեցությամբ, լրացվում է օրգանական մնացուկներով:

Հողն անընդհատ զարգանում և փոփոխվում է: Բնութագրվում է բերրիությամբ՝ բույսերին մատչելի սննդանյութերով և ջրով ապահովելու ունակությամբ, որի շնորհիվ այն դառնում է արտադրամիջոց, աշխատանքի առարկա, նյութական բարիքների աղբյուր: Հողը գյուղատնտ. արտադրության հիմնական միջոցն է. ագրոտեխնիկական, ագրոքիմիական ու բարելավող միջոցառումների կիրառմամբ այն կարելի է դարձնել առավել արդյունավետ, որի ցուցանիշը բույսերի բերքատվությունն է:

Լեռնամարգագետնային հողերը զբաղեցնում են [ՀՀ](#) տարածքի 13, 3%-ը (346 հզ. հա), մարգագետնատափաստայինը՝ 10, 8%-ը (283 հզ. հա), անտառային գորշը՝ 5%-ը (133 հզ.

հա), ճմակարբոնատայինը՝ 0, 6%-ը (15 հզ. հա), անտառային դարչնագույնը՝ 21, 6%-ը (564 հզ. հա), լեռնային սևահողերը՝ 27, 5%-ը (718 հզ. հա), մարգագետնասևահողայինը՝ 0,5%-ը (13 հզ. հա), լեռնային շագանակագույնը՝ 9,2%-ը (242 հզ. հա), կիսաանապատային գորշը՝ 5, 8%-ը (152 հզ. հա), ոռոգելի մարգագետնային գորշը՝ 2.0%-ը (53 հզ. հա), պալեոհիդրոմորֆ կապկցված ալկալիացածը՝ 0, 1%-ը (2, 3 հզ. հա), գետահովտադարավանդայինը՝ 1, 8%-ը (48 հզ. հա), հիդրոմորֆ աղուտ ալկալի՝ 1, 1% (29 հզ. հա), հողագրունտներ՝ 0, 7% (18 հզ. հա):

ՀՀ հողերն ունեն կավային, կավավազային, ավազակավային մեխանիկական կազմ:

Հանքավայրի տարածաշրջանում տարածված են լեռնատափաստանային և մարգագետնային սևահողերը, գորշ և դաչնագույն անտառային և լեռնաշագանակագույն հողերը:

Լեռնամարգագետնա-տափաստանային հողեր՝ Այս հողերը տեղակայված են 2400–2600 մ ծ.մ.բ. սահմաններում և տիպիկ են առավել զառիթափ լանջերի, կիրճի անտառածածկ վերին հատվածների, բարձրադիր տափաստանների, սարահարթային խոտհարքների և նախալեռնային շրջանների համար:

Հողի վերին բերրի շերտը որպես կանոն բնութագրվում է սակավահողությամբ: Առավել մեղմաթեք լանջերում այն միջինում 0,15 մ է և ծածկված է ենթահողային հորիզոնով, որի հաստությունը տատանվում է բարակից մինչև 0.5 մ սահմաններում: Հողերը սև կամ մուգ դարչնագույն-շագանակագույն ավազակավեր են՝ տեղ-տեղ քարքարոտ կամ մանրախճային կազմով և թույլ ստրուկտուրայով:

Հողերը թթվային են՝ կրի ցածր պարունակությամբ կամ կրազերծ: Ենթահողից արմատական ապարներ անցումը ցայտուն է և բնութագրվում է արմատական ապարների հողմնահարվածությամբ և թույլ մեխանիկական կազմով կավային կամ քարքարոտ սակավազոր հողերով:

Դարչնագույն անտառային հողեր՝ Դարչնագույն անտառային հողերը հանդիպում են 1600–1900 մ ծ.մ.բ. սահմաններում և բնութագրական են առավել զառիթափ լանջերին, անտառապատ բարձրադիր լանջերին տափաստանների և նախալեռնային շրջանների համար, որտեղ ջերմության և/կամ խոնավության մակարդակն առավել բարձր է: Տեղումների հարաբերական բարձր քանակության պատճառով ստեղծվում է թթվագոյացման ուժեղ ռեժիմ, որի արդյունքում կավերն


ուղղահայաց տեղափոխվում են պրոֆիլի ներսում և դրա ստորին հատվածում կավային հորիզոն է ստեղծվում: Արդյունքում խթանվում է միջին թթվային (pH 4.5-5.9) ռեակցիա: Այս հողերի վերին շերտում օրգանական նյութերի բարձր պարունակությունը (4-8%) պայմանավորված է մակերևութային հարուստ բուսականությամբ (հիմնականում անտառներ), որը գործելով որպես հակաէրոզիոն միջոց օգնում է նաև հողի թույլ կավավազային ստրուկտուրան կապել իրար:

Բերվածքային դարչնագույն հողերը տարածված են Որոտան և Արփա գետերի ավազանում մոտ 2200 մ ծ.մ.բ. վրա: Այս հողերը ավելի խորն են, հողի վերին շերտի պրոֆիլի հզորությունը հաշվարկվել է 0.25 մ, որը կազմված է մուգ շագանակագույն, գնդիկանման ալյուվիալ կավերից: Ստորին ենթահողի շերտը կազմված է բաց շագանակագույն գնդիկա-նման ալյուվիալ կավերից, որոնք փշրվում են մանր կտորների և ներկա են մինչև 0.7 մ խորությունը: Գետահովիտներում հողերը զարնանն ու աշնանը կարող են ենթարկվել երկարատև հագեցվածության: Այս հողերի լայնորեն օգտագործվում են մի շարք մշակա-բույսերի աճեցման նպատակով և ենթարկվում են ամենամյա մշակման:

Լեռնաշագանակագույն հողեր տարածված են Հայաստանի Հանրապետության Արարատյան գոգավորությունում, Հարավ-Արևելքում: Հումուսային շերտի հաստությունը՝ 45-60սմ: Հումուսի պարունակությունը՝ 3-4%:

Տարածաշրջանում հողերի տիպերի տարածման քարտեզը ներկայացված է նկարում:

Հողերի բնական տիպերի տարածման քարտեզ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ ՀՈՂԱՅԻՆ ՏԻՊԵՐ

- | | |
|---|--|
| 1 | Լեռնամարգագետնային |
| 2 | Լեռնամարգագետնատափաստանային |
| 3 | Գորշ և դարչնագույն անտառային |
| 4 | Լեռնատափաստանային և մարգագետնային սևահող |
| 5 | Լեռնաշագանակագույն |

Շագանակագույն հողերը մեծ մասամբ քարքարոտ են, էրոզացված, դրանց մակերեսային քարքարոտությունը կազմում է 70.3%, որից 18.8%-ը՝ թույլ քարքարոտ, 17%՝ միջին քարքարոտ, 34.5%-ը՝ ուժեղ քարքարոտ:

Շագանակագույն հողերը ձևավորվել են տիպիկ չոր տափաստանային բուսականության տակ, հրաբխային ապարների հողմնահարված նյութերի, ինչպես նաև տեղակուտակ, ողողաբերուկ և հեղեղաբերուկ գոյացումների վրա:

Ըստ մեխանիկական կազմի այս հողերը դասվում են միջակ և ծանր կավավազային տարատեսակների շարքին: Կախված ռելիեֆի պայմաններից և էրոզիայի ենթարկվածության աստիճանից՝ հանդիպում են ինչպես ավելի թեթև, այնպես էլ ծանր մեխանիկական կազմով հողերով:

Հողերի կլանման տարողությունը համեմատաբար ցածր է, որը պայմանավորված է հումուսի սակավ պարունակությամբ և թեթև կավավազային մեխանիկական կազմով:

Շագանակագույն հողերի ծավալային զանգվածը տատանվում է 1.24-1.48գ/սմ³-ի, տեսակարար զանգվածը՝ 2.50-2.65գ/սմ³-ի, ընդհանուր ծակոտկենությունը՝ 4.38-52.1, խոնավությունը՝ 20-30%-ի սահմաններում:

Այս տիպի հողերը պարունակում են մեծ քանակությամբ կարբոնատներ՝ մինչև 10-25%, որն առաջ է բերում հողերի ցեմենտացիա և քարացում: Հողը և փխրուկաբեկորային

մայրատեսակը հարուստ են հողակալային մետաղներով, ֆոսֆորական թթվով և կալիումով:

Անմշակ հողերում ստրուկտուրան խոշոր կնձկային է:

Հանքային աղբյուրի տարածքում տարածված են լեռնամարգագետնատափաստանային ու գորշ և դարչնագույն անտառային տիպի հողերը: Հանքային աղբյուրի հողերը ըստ նպատակային նշանակության հանդիսանում են ջրային հողեր: Աղբյուրի հարևանությամբ հողերը գյուղատնտեսական նշանակության են, հողատեսքը՝ վարելահող: Հանքային աղբյուրից շուրջ 80մ հեռավորության վրա գտնվում են գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության հողեր:

2.8 Բուսական և կենդանական աշխարհ

Բազմազան է շրջանի կենդանական աշխարհը:

Հանդիպում են բեզուարյան այծ, մուֆլոն, աղվես, գայլ, ճագարամուկ, գետնասկյուռ, խլուրդ, ժանտաքիս, քարակաքավ, արտույտ, մկնաբազե, ճայուկ, կաքավ, լոր, սոխակ, ծիծեռնակ, արծիվ, բազե, սևճակատ շամփրուկ, տափաստանային իծ, ժայռամողես, կանաչ դողոշ, լեռնային գորտ, մրջյուններ, ծղրիղներ, թիթեռներ:

Գետերն ու լճերը հարուստ են ձկներով: Որոտան գետում և մյուս մաքուր ու սառնորակ ջրերում բազմանում է կարմրախայտ արժեքավոր ձկնատեսակը, որը, սակայն, անխնա որսի և ոչնչացման պատճառով հիմա հանդիպում է խիստ հազվադեպ:

Մարդու տնտեսական գործունեության հետևանքով նկատելիորեն տուժել է տարածաշրջանի բնությունը. Մի շարք բույսեր ու կենդանիներ հայտնվել են Կարմիր գրքում:

Կենդանիներից այստեղ են գրանցվել՝ բեզուարյան այծը, հայկական մուֆլոնը, գանգրափետուր հավալուսնը, կարմրաթևիկը:

Ողնաշարավորներից՝ լճագորտ, ժայռային մողես, սովորական լորտու, ճնճղուկ, մոխրագույն ագռավ, կաչաղակ, սովորական և հասարակական դաշտամուկ, մոխրագույն առնետ, գայլ, աղվես, աքիս:

Անողնաշարավորներից՝ անձրևաորդ, ծովախեղդետին, մրջյուն, մեղու, ճռիկ:

Հանքային ջրի աղբյուրի տարածքը գտնվում է Շենաթաղ գյուղի սահմաններում:

ՀՀ Կարմիր գրքում ներառված կենդանիները բացահանքի տարածքում բացակայում են:

Ինչպես ամբողջ Հայաստանը, այնպես էլ Սիսիանի տարածաշրջանը բնության հակադրությունների երկիր է: Ընդամենը մի քանի տասնյակ կիլոմետր տարածության վրա բնությունն ամբողջովին փոխվում է, փոխվում է նաև բուսական աշխարհը:

Բուսական աշխարհի այսպիսի բազմազանությունը հետևանք է բնապատմական զարգացման և տարածաշրջանի ուրույն աշխարհագրական դիրքի: Ակներև է ուղղաձիգ գոտիականությունը:

Տարածաշրջանում ամենատարածված բուսականությունը փետրախոտա-սիզախոտայինն է, որն ավելի վեր բարձրանալիս փոխվում է հացազգի –տարախոտային բուսականության, այնուհետև՝ մարգագետնատափաստանային բուսականության:

Ցածրադիր գոտում հանդիպում են առվույտը, դաշտավլուկը, երեքնուկը, կծմախոտը, լերդախոտը, մակարդախոտը, շյուղախոտը, սեզը, սիզա-խոտը, փետրախոտը: Բարձրադիր գոտում հանդիպում են նեղատերև փետրախոտը, կորնգանը, անմոռուկը, գնարբուկը, ընձախոտը, մկնախոտը, խատուտիկը, հալևորուկը, այծախոտը, թթվիճը: Մերձալպյան գոտում տարածված են բազմազան ծաղիկներով ծածկված մարգագետինները, որոնք գորգերի տպավորություն են թողնում և հայտնի են «ալպյան գորգեր» անունով: Այս գոտին իր խոտհարքներով ու արոտավայրերով մեծ նշանակություն ունի անասնապահության զարգացման համար:

Մերձալպյան գոտում հանդիպում են ձնծաղիկ, աստղաշուշան, երեքնուկ, անմոռուկ, կակաչ, լոբազգիներ, իսկ ալպյան գոտում հանդիպում են զանգակածաղիկ, ոջլադեղ, գայլաթաթ, փայլասենի, վարդակակաչ:

Բարձր լեռնային մասերում, լեռնամարգագետնային հողերի վրա տարածվում են մերձալպյան և ալպյան մարգագետիններ: Մարգագետնային տափաստանները ներկայացված են՝ Շյուղախոտ ոչխարի, Կելերիա սանրանման, Սիզախոտ սիզախոտանման տեսակներով և տարախոտային մարգատափաստանների ֆորմացիաներով:

Բնական բուսածածկերի տիպերը հայցվող տարածքում թեև հիմնականում բաշխվում են ըստ վերընթաց լանդշաֆտային գոտիների, սակայն հաճախ են դեպքերը, երբ գոտիներին բնորոշ բուսածածկերը ներթափանցում են իրար մեջ և՛ վերին, և՛ ներքին

սահմաններում՝ կախված լեռների դիրքադրությունից կամ ռելիեֆի առանձնահատկություններից:

Համաձայն Հայաստանի ազգային ատլասի, հանքավայրի տարածքում տարածված է տափաստանային՝ հացազգային, տարախոտա-հացազգային բուսածածկույթը (տես սխեմատիկ քարտեզը):

Բացահանքը և հարակից տարածքները փաստացի հանդիսանում են գյուղատնտեսական ակտիվ օգտագործվող տարածքներ, որտեղ մարդիկ զբաղված են հացազգի մշակաբույսերի (ցորեն, գարի) մշակությամբ: Մշակվում է նաև առվույտ: Վարելահողերի ինտենսիվ օգտագործման արդյունքում բազմամյա բույսերը, թփուտները և ծառերը բացահանքի տարածքում բացակայում են:

Համաձայն բուսաբանական հետազոտությունների՝ հանքավայրի տարածքին բնորոշ են լեռնային տափաստանների բուսատեսակները, որոնք հիմնականում ներկայացված են հետևյալ ֆորմացիաներով՝ փետրախոտային, շյուղախոտային և ցորնուկային: Լայնորեն տարածված են տրագականտները՝ Գազ ոսկեզօծ, Գազ նապաստակապոչ:

Տափաստանային թփերից գերակշռում են Ասպիրակի և ոզնաթուփի տեսակները, Սոխ ժայռի բազմամյա խոտաբույսը:

ՀՀ Կարմիր գրքում ներառված բույսեր բացահանքի տարածքում չկան:

2.9 Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Հանքավայրի տարածաշրջանում բնապահպանական տեսանկյունից խոցելի, կամ բնության հատուկ պահպանվող տարածքները բացակայում են:



Սև լիճը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում՝ Սյունիքի հրաբխային բարձրավանդակի Մեծ Իշխանասար լեռնաստորոտի խառնարանային մասում՝ 2658մ բարձր. վրա: Անհոսք քաղցրահամ լիճ է: Մակերեսը մոտ 240 հեկտար է, երկարությունը՝ 1,6 կմ, լայնությունը՝ 1,2 կմ, առավելագույն խորությունը մոտ 7,5 մ է, ջրի ծավալը՝ ավելի քան 9 մլն մ³: Լիճը կազմավորվել է ձնհալից և բնական աղբյուրներից, որոնք լցվել են լեռան խառնարանը: Լիճը շրջապատող տարածքը ծածկված է բուսականությամբ, որը բնորոշ է ալպյան մարգագետիններին: Առանձնացվում են 102 տեսակի բույսեր: Արգելավայրի նպատակն է պահպանել բարձր լեռնային հրաբխային ծագման եզակի ջրավազանը և նրա հարակից բնատարածքները, 102 տիպի անոթավոր բույսերն ու ալպյան գոտու բուսական և կենդանական համակեցություններ:

"Սև լիճ" արգելավայրը հիմնադրվել է ՀՀ կառավարության 12.10.2001թ. Ն-975 որոշմամբ՝ ՀՀ կառավարության 17.10.1987թ. N717 որոշմամբ ստեղծված արգելոցի բազայի վրա:

Արգելավայրը գտնվում է հանքավայրից 21.0կմ հեռավորության վրա:

2.10 Պատմության, մշակույթի և բնության հուշարձաններ և պատմամշակութային միջավայր.

ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 15-ի թիվ 385-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների: Շենաթաղ բնակավայրի տարածքում նշված են հետևյալ հուշարձանները.

ՇԵՆԱԹԱԴ գյուղ


Հուշարձան	Ժամանակաշրջան	Տեղադիրքը
ԱՄՐՈՑ	միջնադար	գյուղից 1 կմ հվ
ԱՄՐՈՑ		գյուղից 4 կմ հս
ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	16-20 դդ.	գյուղի մեջ, Սբ. Աստվածածին եկեղեցու մոտ
Տապանաքար պարոն Պարիքի	1509 թ.	
ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	18-20 դդ.	գյուղի մեջ, դպրոցի մոտ
ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ԱՀԱԿԻԶ»	միջնադար	գյուղից մոտ 500 մ հս-ամ
ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ԱՆԱՊԱՏ»	միջնադար- 19 դ.	գյուղից մոտ 2 կմ հս-ամ, բլրալանջին
ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ՄՐՈՑ»	16-18 դդ.	գյուղից մոտ 4 կմ ամ
Գերեզմանոց	16-18 դդ.	գյուղատեղիի եկեղեցու մոտ
Եկեղեցի	16-17 դդ.	բլրալանջին
ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ՇՆՈՐԴԱՑ»	միջնադար- 17 դ.	գյուղից 2 կմ հվ, թեք տեղանքում
Գերեզմանոց	միջնադար- 17 դ.	գյուղատեղիի եկեղեցու մոտ
Եկեղեցի	միջնադար	
ԵԿԵՂԵՑԻ ՍԲ. ՍԱՐԳԻՍ	միջնադար	գյուղի մեջ

ՀՈՒՇԱՐՔՈՒՐ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ՋՈՀՎԱԾՆԵՐԻՆ	ԵՐԿՐՈՐԴ	1968 թ.	գյուղի մեջ
ՀՈՒՇԱՐՁԱՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ՋՈՀՎԱԾՆԵՐԻՆ	ԵՐԿՐՈՐԴ	1970 թ.	գյուղի մեջ

Մոտակա հուշարձանը գտնվում է գյուղի մեջ, այսինքն աղբյուրից առնվազն 500մ հեռավորության վրա: Հանքային աղբյուրի շահագործման արդյունքում հուշարձանների վրա բացասական ազդեցությունը բացառվում է:

3.ՍՈՑԻԱԼ- ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

3.1 ՀՀ Սյունիքի մարզի սոցիալ տնտեսական բնութագիրը



Մարզի տարածքը կազմում է 4506 քառ. կմ, ՀՀ տարածքի 15.1 %-ը: Սահմանի երկարությունը՝ 472 կմ, որից՝ 110 կմ Ադրբեջանի հանրապետության (Նախիջևանի ինքնավար մարզ) հետ արևմուտքում, 42 կմ՝ Իրանի Իսլամական Հանրապետության

հետ հարավում, 272 կմ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հետ արևելքում և 48 կմ ՀՀ Վայոց Ձորի մարզի հետ՝ հյուսիսում: Սյունիքի մարզը ներառում է Կապանի, Գորիսի, Սիսիանի և Մեղրու շրջանները:

Սյունիքն օգտակար հանածոներով Հանրապետության ամենահարուստ մարզն է: Հանրահայտ են Քաջարանի, Կապանի, Ագարակի, Դաստակերտի, Լիճքի, Սվարանցի մոլիբդենի, պղնձի, ոսկու և հազվագյուտ այլ մետաղների հանքավայրերը, որոնցից շահագործվում են Քաջարանի, Կապանի, Ագարակի, Լիճքի հանքավայրերը: Զգալի են բազալտի, մարմարի, կրի, կավի պաշարները, հիդրոէներգետիկ մեծ ռեսուրսներ, հողեր, հարուստ անտառներ և ալպյան մարգագետիններ:

Սյունիքի մարզում կան շուրջ 170 մեծ և փոքր գետեր, որոնցից առավել խոշորներն են Որոտանը, Ողջին և Մեղրիգետը: Մարզի ջրամբարներն են Սպանդարյանի (ջրատարողությունը՝ 257 միլիոն մլն մ³), Տոլորսի (96, 8 միլիոն մլն մ³), Շամբի(13, 6 միլիոն մլն մ³), Անգեղակոթի (3.4մլն մ³) և Գեղիի (15 միլիոն մլն մ³) ջրամբարները:

Սյունիքի մարզը զբաղեցնում է Զանգեզուր բնաշխարհի տարածքը, որը ներառում է Որոտան, Ողջի գետերի վերին ու միջին հոսանքների ավազանը և Զանգեզուրի՝ Մեծ Կովկասից հետո Անդրկովկասում ամենաբարձր լեռնաշղթայի, արևելյան լանջերը: Մարզի ամենաբարձր լեռնագագաթը Կապուտջուղն է (3904մ), իսկամենացածր վայրը՝ Մեղրու կիրճը (Արաքսի հովիտ, 380մ): Տարածքի մակերևույթի միջին բարձրությունը կազմում է 2200մ, որը գերազանցում է միջին հանրապետական ցուցանիշը 350 մետրով:

Սյունիքի մարզում, ըստ բարձունքային գոտիականության, հերթափոխվում են Հանրապետության տարածքին բնորոշ կլիմայի գրեթե բոլոր տեսակները՝ չոր մերձարևադարձային, չափավոր տաք, բարեխառն, ցուրտ լեռնային և ձյունամերձ: Սյունիքում է գտնվում Հանրապետության ամենատաք վայրը՝ Մեղրու ցածրադիր գոտին: Արևափայլքի տարեկան տևողությունը տատանվում է 2120 ժամից (Գորիս) մինչև 2700 ժամի (Մեղրի) սահմաններում: Տարվա ամպամած օրերի միջին թիվը կազմում է 40 օր: Օդի միջին ջերմաստիճանը հունվարին 0.9 °C-ից (Մեղրի) - 9.8 °C է (Գորայք), հուլիս-օգոստոսին՝ 13.9-25.4°C: Տեղումների տարեկան քանակը տատանվում է 161 մմ (Մեղրի) մինչև 826 մմ (Սիսիանի լեռնանցք): Տեղումների առավելագույն մասը դիտվում է մայիսին, նվազագույնը՝ օգոստոսին:

Բնական հուշարձաններից հայտնի են Գորիսի և Խնձորեսկի «բուրգերն» ու քարայրերը, Շաքիի ջրվեժը (18մ)՝ Փոքր Կովկասի ամենաբարձր ջրվեժը, Որոտանի և Ողջիի կիրճերը, «Սատանի կամուրջը», Ծավի՝ աշխարհի ամենամեծ բնական սոսիների ռելիկտային պուրակը (60 հա), Շիկահողի արգելոցը, Մթնածորի անտառը: Պատմամշակութային հուշարձանների մեջ հայտնիներից են Զորաց քարերի հնագույն աստղադիտարանը, Բաղաբերդի, Հալիձորի, Որոտնաբերդի ամրոցները, Տաթևի, Որոտնա, Բղենու վանքերը, Վահանավանքի և Երիցվանքի վանական համալիրները, Աղիտուի դամբարանային հուշարձանը, Սիսիանի նեոլիթի ժամանակաշրջանի դամբարանաբլուրը:

Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերն են, համապատասխանաբար 61,9 և 23,8 տոկոս:

Սյունիքի վերաբերյալ սոցիալ-տնտեսական բոլոր ցուցանիշները տրված են իրավիճակի վերլուծության համապատասխան ոլորտների վերլուծական հատվածներում:

Ժողովրդագրություն

ՀՀ Սյունիքի մարզը հանդիսանում է Հայաստանի ոչ խիտ բնակեցված մարզերից մեկը (բնակչության խտությունը՝ 31 մարդ/քառ.կմ): ՀՀ Սյունիքի մարզի մշտական բնակչությունը 2015թ-ին կազմել է 139,4 հազ. մարդ, որից 94 հազարը քաղաքաբնակ՝ /67,4%/, մնացածը 45,4 հազարը՝ /32,6%/ գյուղաբնակ: Տղամարդիկ կազմում են բնակչության 50,93%-ը, կանայք՝ 49,07%-ը:

Ազդակիր համայնքը, ենթակառուցվածքները /առողջապահություն, տրանսպորտային համակարգ, էներգացանց, կրթություն/, հողերի տնտեսական յուրացման բնութագիրը

Շենաթաղ (նախկին անվանումներ՝ *Շինաղաթ, Մաստան, Լեռնաշեն* (մինչև 1990), այլ անվանումներ՝ *Շինաթաղ*), գյուղ Հայաստանի Սյունիքի մարզում: Ըստ Ազգային վիճակագրական ծառայության՝ 2011 թվականին կատարած մարդահամարի տվյալների՝ գյուղի բնակչությունը կազմում է 422 մարդ, ինչը բարձրացել է՝ համեմատած 2001 թվականի մարդահամարի տվյալների հետ (390):

Գյուղի շրջակայքում են կառուցվել Տատան և Սագու կոչվող ամրոցները: Գյուղի կենտրոնում պահպանվել է Սուրբ Մարտիրոս եկեղեցին՝ կառուցված 1704 թվականին:

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են անասնապահությունը և դաշտավարությունը: Ներկա պահին գյուղատնտեսությամբ է զբաղվում 146 տնային տնտեսություն: Բավականին զարգացած է մեղվաբուծությունը:

ՄԻՄԻԱՆ /նախկին Ղարաքիլիսա/ բնակավայրը 1922-1930 թթ. եղել է Զանգեզուրի գավառի Սիսիանի գավառամասի կազմում, 1930թ.-ից՝ Սիսիանի վարչական շրջանի շրջկենտրոն: 1935-1940 թթ.-ին կոչվել է Սիսավան: 1974-1995 թթ.-ին ունեցել է շրջանային ենթակայության քաղաքի կարգավիճակ: 1995 թ.-ի դեկտեմբերի 4-ին ՀՀ կառավարության կողմից հաստատված «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» օրենքով Սիսիանը քաղաքային համայնք է Սյունիքի մարզի կազմում: Սիսիանը քաղաքի կարգավիճակ է ստացել 1979 թ.-ին:

Սիսիան բազմաբնակավայր համայնքը կազմավորվել է «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ 2017 թվականի հունիսի 9-ի ՀՕ - 93-Ն օրենքի համաձայն՝ Սիսիանի տարածաշրջանի 30 համայնքների միավորման արդյունքում:

Ընդգրկում է 32 բնակավայր (2 քաղաք, 30 գյուղ), որից մեկը համայնքի կենտրոն Սիսիան քաղաքն է: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 102-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց լիազորությունները ստանձնել են 2017 թվականի նոյեմբերի 13-ից:

Համայնքի կազմում ընդգրկված են հետևյալ բնակավայրերը՝

Սիսիան քաղաք, Դարբաս գյուղ, Շամբ գյուղ, Ախլաթյան գյուղ, Թանահատ գյուղ, Շաքի գյուղ, Աղիտու գյուղ, Թասիկ գյուղ, Շենաթաղ գյուղ, Անգեղակոթ գյուղ, Իշխանասար գյուղ, Որոտնավան գյուղ, Աշոտավան գյուղ, Լծեն գյուղ, Սալվարդ գյուղ, Արևիս գյուղ, Լոր գյուղ, Վաղատին գյուղ, Բալաք գյուղ, Հացավան գյուղ, Տոլորս գյուղ, Բնունիս գյուղ, Մուցք գյուղ, Տորունիք գյուղ, Բոնակոթ գյուղ, Նժդեհ գյուղ, Յդունի գյուղ, Գետաթաղ գյուղ, Նորավան գյուղ, Ույծ գյուղ, Դաստակերտ քաղաք, Շաղատ գյուղ:

<u>Մակերես</u>	43,84 կմ ²
<u>ԲԾՄ</u>	1760 մ
<u>Բնակչություն</u>	422 մարդ (2011)
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԸՆԴԳԻԿՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԹԻՎԸ/ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ	32 (ք. Սիսիան, ք. Դաստակերտ, Դարբաս, Շամբ, Ախլաթյան, Թանահատ, Շաքի, Աղիտու, Թասիկ, Շենաթաղ, Անգեղակոթ, Իշխանասար, Որոտնավան, Աշոտավան, Լծեն, Սալվարդ, Արևիս, Լոր, Վաղատին, Բալաք, Հացավան, Տոլորս, Բնունիս, Մուցք, Տորունիք, Բոնակոթ, Նժդեհ, Ցղունի, Գետաթաղ, Նորավան, Ույծ, Շաղատ բնակավայրեր)
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԸ (ՄԱՐԴ)	30415
ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՑ (ԿՄ)	214
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԸ (հա)	123384
ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆԸ ԾՈՎԻ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԻՑ (Մ)	1600

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Շրջակա միջավայրը դա մարդու բնակության և արտադրական գործունեության միջավայրն է, որը պահպանության և ազդեցության գնահատման կարիք ունի:

Շրջակա միջավայրի պահպանության հիմնական խնդիրներն են շրջակա միջավայրի բնական վիճակի պահպանումը, վերականգնումը, վնասագործումը, բնական պաշարների խելամիտ օգտագործումը, շրջակա միջավայրի վրա ֆիզիկաքիմիական, կենսաբանական, մեխանիկական, ռադիոակտիվ և այլ վնասակար ազդեցությունների նվազեցումն ու կանխումը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը դա շրջակա միջավայրի վրա բնածին և մարդահարույց ներգործության էկոլոգիական հետևանքների վերլուծությունն է՝ շրջակա միջավայրի որակի պահպանման և բնակչության էկոլոգիական անվտանգության ապահովման նպատակով: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման դեպքում իրականացվում է մթնոլորտային օդ և մակերևութային ջրերի մեջ արտանետվող աղտոտող նյութերի քանակի և բաղադրության մշտական հաշվառում և չափումներ, մշակվում են դրանց կրճատման և կանխման միջոցառումներ: Շրջակա միջավայրի վիճակի գնահատման համար սահմանվում են աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի կոնցետրացիաներ, սահմանային թույլատրելի արտանետումներ և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի նորմատիվներ:

Մարդն իր արտադրական գործունեությամբ մշտապես ազդում է շրջապատող բնության վրա: Այդ ազդեցության հետևանքով բնական միջավայրը կարող է բարելավվել (ծառատնկում, ոռոգում և այլն), դառնալ ավելի բարենպաստ մարդու կյանքի ու գործունեության համար, կամ էլ խաթարվել, քայքայվել:

Մարդու աշխատանքային գործունեության հետևանքով շրջակա միջավայրը կարող է խաթարվել երկու դեպքում: Առաջին, երբ մարդը բնությունից կորզում է և օգտագործում է նրա տարրերը ոչ այն չափով, որքան կարելի է և ոչ այնտեղ, որտեղ կարելի է: Երկրորդ, երբ մարդը բնությանն է վերադարձնում արտադրական կամ կենցաղային այնպիսի թափոններ և այն քանակով, որ բնությունը չի կարողանում ինքնամաքվել:

Երկու դեպքերում էլ տեղի է ունենում բնական միջավայրի էկոլոգիական հավասարակշռության խախտում, և հասունանում է էկոլոգիական ճգնաժամը, ապա և աղետը:

Շենաթաղի ածխաթթվային հանքային ջրի շահագործման բազմամյա փորձը ցույց է տվել, որ արդյունահանման աշխատանքների ընթացքում որևիցե տեխնածին ճնշումներ հանքավայրի շրջակայքի մթնոլորտի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա չեն դրսևորվել, քանի որ, հանքային ջրի արդյունահանման ընթացքում փոշու և վնասակար նյութերի արտանետումներ չի կատարվել, իսկ կենցաղային աղբը տեղափոխվել է մոտակա աղբավայրի կետեր:

Շենաթադի ածխաթթվային հանքային ջրի աղբյուրի տարածքում բացակայում են սողանքային երևույթները, մոտակայքում կան արդյունաբերական, բնակելի և տնտեսական շինություններ:

Ընկերությունն օգտվում է գոյություն ունեցող ավտոճանապարհից և ենթակառուցվածքներից՝ գազատար, ջրատար, էլեկտրահաղորդման գծեր և կոյուղագծեր, իսկ հանքավայրի շահագործման (շալցման) համար նոր օժանդակ շինությունների կառուցում չի նախատեսվում:

Շենաթադի ջրհավաք թիվ 1 աղբյուրի շահագործումը ընկերությունը մինչ օրս իրականացնում է համաձայն ՀՀ կառավարության 5 հոկտեմբերի 2017 թվականի N 1267-Ն որոշմանը, որը կիրառվում է բնօգտագործման վճար վճարող ջրօգտագործողների կողմից ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների հաշվառման նպատակով ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի, գազաչափերի տեղադրման և կնքման, ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների ծավալների վերաբերյալ տվյալների արձանագրման կարգերը և ժամկետները սահմանելու ժամանակ:

Ընկերությունը հանքային ջրից շալցման գործընթացը կշարունակի իրականացնել Շամբ համայնքում գտնվող հանքային ջրերի գործարանում, որը հազեցած է անհրաժեշտ տեխնոլոգիաներով և սարքավորումներով:

Հանքային աղբյուրի արդյունավետ շահագործման և արտադրության կազմակերպման համար ընկերությունը համալրված է բազմափորձ մասնագետներով:

Հանքային ջրերի հանքավայրերի շահագործման բազմամյա փորձը գալիս հավաստելու, որ հանքային աղբյուրի շահագործման ընթացքում ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, հաշվի առնելով աշխատանքների բնույթը, կլինի գրեթե զրոյական:

5. ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆԸ /ԲԱՑԱՌՄԱՆԸ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

- Մարդկային արտադրական գործունեությունը միաժամանակ լուրջ վտանգ կարող է սպառնալ շրջապատող միջավայրին, եթե այն իրականացվի առանց հաշվի առնելու ընդերքի, ջրային ռեսուրսների, շրջապատող միջավայրի պահպանության պայմանները:
- Համաձայն ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի (հոդված 64), ընդերք շահագործողները պարտավոր են ապահովել շրջակա միջավայրի

պահպանության պայմաններն ու պահանջները, իրականացնելով հետևյալ միջոցառումների իրականացումը՝

- մթնոլորտի, ջրային ռեսուրսների, հողի, կենդանական և բուսական աշխարհի պաշտպանությունն ու պահպանումը,
- բնության հատուկ պահպանվող տարածքների ռեժիմի պահպանումը,
- ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողերի ռեկուլտիվացիայի, ծառատնկման, կանաչապատման աշխատանքների իրականացումը, մշակված հանքային տարածությունների վերականգնումը,
- շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթարկված փաստաթղթերի պահանջների ու միջոցառումների կատարումը,
- շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված պայմանագրային պարտավորությունների կատարման ապահովումը և այլն:
- Ջրհավաք հորատանցքերի շահագործման աշխատանքները կիրականացվեն՝ հաշվի առնելով ընդերքի, ջրային ռեսուրսների, շրջակա միջավայրի և բնապահպանության ոլորտների ՀՀ օրենսդրության պահանջները, որոնք ներառում են հետևյալ հիմնական միջոցառումները.
- պահպանել աշխատանքների կատարման համար հողահատկացման սահմանված կարգը,
- բնական պայմանների խախտման բացասական երևույթների վերացում,
- բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը և շրջակա միջավայրի պահպանման համար առանցքային միջոցառումների ձեռնարկումը,
- աշխատանքների վարման անվտանգ ձևերի ընտրություն և այլն:

Ստորերկրյա ջրերի (քաղցրահամ և հանքային) հանքավայրերի շահագործման երկարամյա փորձը գալիս է հավաստելու, որ դրանց պաշարների արդյունաբերական յուրացումն բացասական ազդեցություն չի թողնում շրջակա միջավայրի վրա:

Շենաթաղի ածխաթթվային հանքային ջրի թիվ 1 աղբյուրը գտնվում Շենաթաղ գյուղի տարածքում, բնակելի տների հարևանությամբ, հանքավայրի տեղամասում չկան անտառային ծածկույթներ, բացակայում են սողանքային երևույթները և այլն:

Աղբյուրի տարածքը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում: Չեն արձանագրվել նաև ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում նշված բուսական կամ կենդանական տեսակների աճելավայրեր և ապրելավայրեր:

Աշխատանքների կատարման ընթացքում ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, հաշվի առնելով աշխատանքների բնույթը, կլիմայի աննշան և չի հանգեցնի էկոհամակարգերի վրա բացասական ճնշումների դրսևորմանը:

Ջրհավաք աղբյուրի արդյունավետ շահագործման հիմնական պահանջները հետևյալն են՝

1. Հանքային ջրի հանքավայրի արդյունավետ և երկարաժամկետ շահագործումը հնարավոր է իրականացնել միայն հանքային աղբյուրի լավ տեխնիկական վիճակի, նրանց գլխամասային սարքավորումների, չափիչ սարքերի, ինչպես նաև սանիտարական պահպանության առաջին խիստ ռեժիմի գոտիի առկայության և պատշաճ վիճակում պահելու պայմաններում:

2. Ածխաթթվային հանքային ջրի աղբյուրի արդյունաբերական շահագործումը պետք է իրականացնել հատուկ ջրհավաքի (կապտաժի) կահավորված չժանգոտվող (խմելու որակի) խողովակաշարով: Շահագործման ժամանակ չի թույլատրվում շահագործվող ջրհավաք աղբյուրից ՊՊՀ-ի կողմից հաստատված պաշարների չափից ավելի արդյունահանումը:

3. Ածխաթթվային հանքային ջրի աղբյուրի շահագործումը պետք է իրականացվի հիդրոերկրաբանական պայմաններին, հանքային ջրերի հաստատված պաշարների քանակին, նրանց քիմիական կազմին, ջերմաստիճանին և ռեժիմին խիստ համապատասխան:

4. Իրականացնել սիստեմատիկ հիդրոերկրաբանական ռեժիմային ստացիոնար մշտադիտարկումներ (մոնիտորինգ) ջրհավաք աղբյուրի շահագործման ռեժիմի և տեխնիկական վիճակի նկատմամբ: Ջրհավաք աղբյուրի շահագործումը և հանքային ջրի ռեժիմի հսկողությունն իր մեջ ներառում է հանքային ջրերի քանակի և որակի նկարագիրը, նրա երկարատև շահագործման պայմաններում, ինչպես նաև հորատանցքի պահպանումը՝ սպառումից, աղտոտումից և աղակալումից:

5. Հանքային ջրերի շահագործման ժամանակ անհրաժեշտ է ապահովել ջրերի կոնդիցիոն քիմիական կազմի պահպանումը:

6. Հակավթարային միջոցառումներ:

7. Անբարենպաստ կլիմայական պայմանների ժամանակ արտանետումների կարգավորման միջոցառումներ:

8. Նախատեսված արդի սարքավորումների տեղադրման շնորհիվ ջրի խնայողություն՝ կբացառվի շաղցման ընթացքում ջրի վերաթափումը և կորուստը:

9. Շշերի խցափչման ինովացիոն մեքենան կահավորված է սանիտար մշակման ուլտրամանուշակագույն լամպերով և բարձր ճնշման օդի լրացուցիչ գոման համակարգով, ինչը թույլ կտա վերացնել նոր շշերի ողողման անհրաժեշտությունը և կբերի ջրի ծախսի կրճատմանը:

10. Գործարանի տարածքում նախատեսված է կանաչ գոտի:

11. Չոր և շոգ եղանակներին բաց հրապարակներում և մերձակա ճանապարհներին կատարվելու է ջրցանում՝ փոշենստեցման նպատակով:

12. Նախատեսվում է հարակից տարածքները չխախտել և չաղտոտել կենցաղային աղբով և այլ տեսակի թափոններով:

13. Հողի բերրի շերտի պահեստավորման պահանջները կարգավորվում են ՀՀ կառավարության 02.11.2017թ-ի «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2008 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1404-ն որոշմամբ:

ՀՀ կառավարության 08.09.2011թ. թիվ 1396-Ն որոշմամբ սահմանվում է օգտահանված բերրի հողի նպատակային և արդյունավետ օգտագործման հետ կապված հարաբերությունները: Համաձայն վերոնշյալ որոշման, հողաշերտը առաջնային կարգով օգտագործվելու է խախտված հողերի ռեկուլտիվացիայի համար:

Հանքային աղբյուրի շահագործումը հողային շերտի վրա ներգործություն չի առաջացնելու, հողաբուսական շերտի հեռացման և պահպանության անհրաժեշտությունը բացակայում է:

Ելնելով այն հանգամանքից, որ ընկերության կողմից շահագործվող աղբյուրը արդեն իսկ կահավորված է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, իսկ հանքային ջրերի գործարանը գոյություն ունեցող է՝ կահավորված համապատասխան սարքավորումներով, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինման անհրաժեշտություն չկա, ուստի կարելի է փաստել, որ արդյունահանման թույլտվության ժամկետի երկարաձգման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները մեղմելու կամ նվազեցնելու համար լրացուցիչ միջոցառումների նախատեսում չի պահանջվում:

5.1. Բնապահպանական մշտադիտարկումների պլան

Հանքային ջրերի պաշարները վերականգնման առանձնահատկություն ունեն և շահագործման ընթացքում պահանջում են զուգահեռաբար իրականացնել ջրերի որակի, քանակի, վիճակի և շահագործման ռեժիմի նկատմամբ ուսումնասիրություններ, որը կապահովի գերծ պահել ջրերը աղտոտումից, սպառումից և տեխնածին գործընթացների վնասակար ազդեցությունից:

Հանքային ջրերի հանքավայրերի շահագործման ժամանակ նախատեսվող և իրականացվող ռեժիմային դիտարկումների նպատակն է՝

1) հանքավայրի շահագործման ժամանակ հանքային ջրի քանակի և որակի կայունության պահպանումը.

2) հնարավոր սպառման և աղտոտման բացահայտումն ու նախազգուշացումը.

3) ստորերկրյա հանքային ջրերի բնական ու խախտված ռեժիմների և դրանց ձևավորման օրինաչափությունների ուսումնասիրությունը.

4) ստորերկրյա հանքային ջրերի ռեժիմի կարճաժամկետ ու երկարաժամկետ կանխատեսումների համար տվյալների հավաքագրումը և վերլուծությունը.

5) ստորերկրյա հանքային ջրերի աղտոտման և սպառման աստիճանի գնահատման մասին հենակետային տվյալների ստացումը.

6) ստորերկրյա հանքային ջրերի շահագործվող հանքավայրերում ջրի ծախսի, ճնշման կամ մակարդակի և ջերմաստիճանի չափումների, ինչպես նաև ֆիզիկաքիմիական անալիզների իրականացումը, ստորերկրյա ջրերի պաշարների վերագնահատման օպերատիվ տվյալների հավաքագրումը, մշակումը և ամփոփումը.

7) ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցումը, անվերադարձ ազդեցության կանխարգելումը,

8) ամփոփ տվյալների հիման վրա առաջարկությունների մշակումը և ներկայացումը լիազոր մարմինին:

Ելնելով վերոհիշյալից, հանքավայրի թիվ 1 աղբյուրի և շշալցման գործարանի տարածքում համաձայն ՀՀ կառավարության 22 նոյեմբերի 2012թ. N 1484-Ն և 22 փետրվարի 2018թ. N 191-Ն որոշումների հավելվածի, սահմանված կարգով, կիրականացվեն մշտադիտարկումներ (մոնիտորինգ)՝ ջրի ծախսի, ճնշման (մակարդակի) և ջերմաստիճանի չափումներ, ինչպես նաև կկատարվեն մթնոլորտային օդի և հողային ծածկույթի նմուշարկումներ՝ համապատասխան լաբորատոր հետազոտություններ իրականացնելու համար (տե՛ս մշտադիտարկումների պլանի կառուցվածքն ու բովանդակության աղյուսակը):

Մշտադիտարկումների պլանի կառուցվածքն ու բովանդակությունը

Մշտադիտարկ-ի օբյեկտը	Մշտադիտարկ-ի վայրը	Ցուցանիշը	Մշտադիտարկ-ի տեսակը	Նվազագույն հաճախակա ն-ը
Հանքային ջրեր	հանքավայրի առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտում ընդգրկված թիվ 1 աղբյուր	- ջրերի քիմի-ական կազմ, - մակարդակ, - ջերմաստիճան, ջրի և գազի ծախս	նմուշի լաբորատոր հետազոտու- թյուն, - չափումներ	-եռամսյակը մեկ անգամ - 10 օրը մեկ անգամ
Մթնոլորտային օդ	շշալցման գործարանի տարածքում	-օդի աղտոտում փոշիով և արտանետում-ներով	- նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտու- թյուն	- տարեկան մեկ անգամ
Հողային ծածկույթ	շշալցման գործարանի տարածքում	- հողերի քիմի-ական կազմ, - հողերում նավ- թամբերքների պարունակու-թյունը	- նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտու- թյուն	- տարեկան երկու անգամ
Կենսաբազմաան	Հանքային աղբյուրի	տարածքին բնորոշ	հաշվառում,	- տարեկան

ության ուսումնասիրությ ուն	տարածքում	վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն	նկարագրությու ն, քարտեզագրում	մեկ անգամ
----------------------------------	-----------	---	-------------------------------------	-----------

Ելնելով հանքավայրի հիդրոերկրաբանական պայմաններից և գործող մեթոդական ցուցումներից՝ ջրի ծախսի, ջերմաստիճանի չափումները կկատարվեն 10 օրը մեկ:

Ջրի նմուշները քիմիական լաբորատորիայում ենթարկվելու են կրճատ քիմիական անալիզի, որտեղ որոշվելու են – (Na+K), NH₄, Ca, Mg, Fe, Cl, SO₄, NO₂, NO₃, CO₃, HCO₃, SiO₂, H₂S, կոշտությունը, հանքայնացումը, չոր նստվածքը, թթվայնությունը, ջրի ֆիզիկական հատկությունները և այլն:

Ստացված արդյունքները հնարավորություն կնվազեցնեն գնահատելու հանքավայրում տեղի ունեցող քանակական և որակական փոփոխությունները:

Արդյունքում կկազմվի հաշվետվություն, որը կներկայացվի «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ն հաշվառման և պահպանման:

Դիտակետերի տեղադիրքերը և կոորդինատները ներկայացվում են.



Հանքային ջրերի և կենսաբազմազանության դիտակետի համարն է՝ 1, հողային ծածկույթի և մթնոլորտային օդի դիտակետը՝ թիվ 2:

Դիտակետերի կոորդինատներն են.

1. $y = 8597650$

$x = 4362200$

2. $y = 8598940$

$x = 4371310$

Եթե հաստատված պաշարների և մոնիտորինգի արդյունքում ստացված տվյալների միջև նկատվի զգալի տարբերություն, ապա համաձայն ՀՀ կառավարության 22 նոյեմբերի 2012թ. 1480–Ն որոշման պահանջների, անհրաժեշտ կլինի վերագնահատել հանքային ջրի հանքավայրի պաշարները և ներկայացնել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի ընդերքի վարչության հաստատմանը:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 300.0 հազ.դրամ:

5.2. Սանիտարական պահպանության գոտի

Հանքային ջրի հանքավայրի արդյունավետ և երկարաժամկետ շահագործումը հնարավոր է իրականացնել միայն աղբյուրի լավ տեխնիկական վիճակի, նրանց գլխամասային սարքավորումների, չափիչ սարքերի, ինչպես նաև սանիտարական պահպանության գոտիների առկայության և պատշաճ վիճակում պահելու պայմաններում: Նախկինում աղբյուրը կահավորված է եղել չժանգոտվող (խմելու որակի) խողովակաշարով:

Ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրի շահագործումը և հանքային ջրի ռեժիմի հսկողությունն իր մեջ պետք է ներառի հանքավայրի վիճակի նկարագիրը՝ հանքավայրի պաշտպանումն աղտոտումից, սպառումից:

Համաձայն Ընդերքի մասին օրենսգրքի հոդված 67-ի ստորերկրյա ջրերի հանքավայրերի շուրջը սահմանվում են սանիտարական պահպանության գոտիներ:

Ածխաթթվային հանքային ջրի բարվոք մանրէաբանական կազմը, շրջապատող միջավայրը, հնարավոր աղտոտող օբյեկտների բացակայությունը սնման և բեռնաթափման մարզերում և ջրատար արդյունաբերական միջակայքի խորը տեղադրված լինելը՝ բարենպաստ պայմաններ են ստեղծում երկրորդ (սահմանափակման գոտու) և երրորդ սանիտարական պահպանության գոտիների անտեսման և միայն առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտու կառուցման անհրաժեշտության մասին:

Վերջինս կոչված է հանքային ջրի ֆիզիկական և քիմիական հատկությունների պահպանման, աղբյուրի ելքը հնարավոր աղտոտումից պահպանելու համար:

Առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտին ընդգրկում է բոլոր այն հորատանցքերը, որոնցով հաշվարկվել և հաստատվել են հանքավայրի շահագործողական պաշարները:

Նկատի ունենալով ջրհավաք թիվ 1 աղբյուրի երկրաբանական կտրվածքը, ջրատար արդյունաբերական միջակայքի խորը տեղադրված լինելը և ջրի ճնշումային բնույթը, այն գտնվում է բարենպաստ սանիտարահիգիենիկ և հիդրոերկրաբանական պայմաններում, որտեղ բացառվում է ստորերկրյա ջրերի աղտոտումը:

Ջրհավաք թիվ 1 աղբյուրը իր գլխամասային սարքավորումներով ներառված է առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտիում: Գոտիները պարսպատված են ցանկապատով և ապահովված պահպանությունով:

Սանիտարական առաջին գոտու սահմանները պահպանելու համար, ելնելով թիվ 1 աղբյուրի ելքի ռելիեֆային պայմաններից, ջրհավաք կառույցը արգելափակվել է 30մ շառավիղով:

Առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտու տարածքը անմիջապես աղբյուրի մոտ պլանավորված է այնպես, որպեսզի հնարավոր լինի մակերևութային աղտոտված ջրերը հեռացնել հորատանցքերի սահմաններից դուրս:

Առաջին սանիտարական պահպանության գոտու տարածքում արգելվում են բոլոր տեսակի շինարարական աշխատանքներ, որոնք չունեն անմիջական կապ աղբյուրի շահագործման, վեռակառուցման/վերանորոգման և սպասարկման հետ:

Ընդերքօգտագործողը/ջրօգտագործողը սանիտարական պահպանության գոտու սահմաններում ունի գործունեության բացառիկ իրավունք: Կողմնակի մարդկանց մուտքը, որոնք կապ չունեն հանքային աղբյուրի շահագործման և պահպանության հետ խստիվ արգելվում է:

Արգելվում է յուրաքանչյուր գործունեություն այլ անձի կողմից: Այն կարող է իրականացվել միայն ընդերքօգտագործողի/ջրօգտագործողի համաձայնությամբ:

5.3 Արդյունաբերական սանիտարիան և անվտանգության տեխնիկան

Աշխատանքի վայրում աշխատողների առողջության պահպանումն ու անվտանգության ապահովումը աշխատանքային հարաբերությունների կարևորագույն բաղադրիչներից է: ՀՀ Սահմանադրության համաձայն՝ «Յուրաքանչյուր աշխատող, օրենքին համապատասխան, ունի առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների, առավելագույն աշխատաժամանակի սահմանափակման, ամենօրյա և շաբաթական հանգստի, ինչպես նաև ամենամյա վճարովի արձակուրդի իրավունք»:

ՀՀ աշխատանքային օրենսգիրքը սահմանում է, որ յուրաքանչյուր աշխատողի աշխատավայրը և շրջապատող միջավայրը պետք է լինեն անվտանգ, հարմար և առողջության համար անվնաս, կահավորված՝ աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանության մասին նորմատիվ իրավական

ակտերի պահանջներին համապատասխան: Այդ ամենը պարտավոր է ապահովել գործատուն:

Աշխատողների անվտանգությունը եւ առողջությունը աշխատանքային գործունեության ընթացքում աշխատողների կյանքի եւ առողջության պահպանման համակարգն է, որը ներառում է իրավական, սոցիալ-տնտեսական, կազմակերպական-տեխնիկական, սանիտարահիգիենիկ, բուժկանխարգելիչ, վերականգնողական եւ այլ միջոցառումներ:

Աշխատանքի ժամանակ յուրաքանչյուր աշխատողի համար պետք է ստեղծվեն օրենքով սահմանված՝ պատշաճ, անվտանգ եւ առողջության համար անվնաս պայմաններ:

Աշխատողների առողջության եւ անվտանգության պահպանությունը պարտավոր է ապահովել գործատուն: Հաշվի առնելով կազմակերպության մեծությունը, աշխատողների համար արտադրության վտանգավորության աստիճանը՝ գործատուն կազմակերպությունում ներգրավում է աշխատողների անվտանգության ապահովման եւ առողջության պահպանման որակավորված ծառայություն կամ այդ գործառույթն իրականացնում է անձամբ:

Անվտանգության ապահովման կանոններից կարելի է նշել.

- աշխատանքի ընդունվող բոլոր բանվորները և ծառայողները պարտավոր են անցնել բժշկական ստուգում,
- յուրաքանչյուր բանվոր, անվտանգության տեխնիկայի գծով նախնական ուսուցումից հետո, պետք է անցնի ըստ մասնագիտության ուսուցման և հանձնի քննությունները,
- աշխատանքային յուրաքանչյուր տեղ աշխատանքներն սկսելուց առաջ հերթափոխի պետի կողմից պետք է կատարվի զննում:
- յուրաքանչյուր բանվոր, մինչ աշխատանքը սկսելը, պետք է համոզվի իր աշխատատեղի անվտանգության ապահովումը,

Արտադրական հրապարակում աշխատողների համար նախատեսվում են սանիտարակենցաղային հարմարություններ, որոնց կազմակերպումը նախատեսվում է իրականացնել ՀՀ առողջապահության նախարարի 2012թ-ի սեպտեմբերի 19-ի թիվ 15-ն «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը՝ հրամանով: Համաձայն վերոնշյալ հրամանի՝ սանիտարակենցաղային հարմարություններն են հանդիսանում՝ հանդերձարանը, ցնցուղարանը, զուգարանը և հանգստի սենյակը: Սանիտարակենցաղային հարմարություններին ներկայացվող պահանջներից են.

Հանդերձարանին ներկայացվող պահանջներն են.

1) արտադրական միջավայրի վնասակար և վտանգավոր (ֆիզիկական, քիմիական, կենսաբանական) և աշխատանքային գործընթացի ծանրության և լարվածության գործոններից զերծ կազմակերպություններում, անձնական հագուստի պահպանման

հանդերձարանները կահավորվում են բաց հանդերձապահարաններով, կամ կախիչներով՝ ամենամեծ հերթափոխում աշխատող անձանց թվին համապատասխան,

2) արտադրական միջավայրի վնասակար և վտանգավոր (ֆիզիկական, քիմիական, կենսաբանական) և աշխատանքային գործընթացի ծանրության և լարվածության գործոններով առկա կազմակերպություններում, անձնական հագուստի և աշխատանքային հագուստի պահպանման հանդերձարանները կահավորվում են փակվող դռներով երկտեղանոց հանդերձապահարաններով՝ ամենամեծ հերթափոխում աշխատող անձանց թվին համապատասխան,

3) իրականացվում է ջեռուցում և բնական օդափոխություն:

4) Հանդերձարանը նախատեսված է անձնական (դրսի և տնային) և աշխատանքային հագուստի պահպանման համար:

Ցնցուղաբանին ներկայացվող պահանջներն են.

1) ցնցուղների թիվը սահմանվում է յուրաքանչյուր 7 մարդուն մեկ ցնցուղ հաշվարկով,

2) ցնցուղների թիվը չի գերազանցում 30-ը,

3) իրականացվում է բնական օդափոխում:

4) Ցնցուղաբանը ներառվում է աշխատանքային միջավայրի վնասակար և վտանգավոր (ֆիզիկական, քիմիական, կենսաբանական), ինչպես նաև աշխատանքային գործընթացի ծանրության և լարվածության գործոններով առկա կազմակերպությունների սանիտարակենցաղային հարմարությունների կազմում և տեղակայվում է կից:

Լվացարանին ներկայացվող պահանջներն են.

1) սարքավորվում է արմնկային կամ ոտնակային կառավարման հարմարանքներով՝ վտանգավոր, մաշկի միջոցով օրգանիզմ թափանցող, խիստ հոտավետ նյութերի ինչպես նաև ստերիլ նյութերի արտադրության կազմակերպություններում,

2) ապահովվում է հոսող ջրով, կախիչով, հեղուկ օձառով, էլեկտրական սրբիչով կամ միանվագ օգտագործման թղթյա անձեռոցիկներով,

3) ծորակների թիվը սահմանվում է յուրաքանչյուր 10 աշխատողին մեկ ծորակ հաշվարկով:

Զուգարանին ներկայացվող պահանջներն են.

1) սանիտարատեխնիկական սարքավորումների (զուգարանակոնքերի) թիվը սահմանվում է 15 մարդուն մեկ սանիտարատեխնիկական սարքավորում հաշվարկով,

2) նախամուտքում յուրաքանչյուր 4 սանիտարատեխնիկական սարքավորման հաշվարկով տեղադրվում է 1 լվացարան, բայց ոչ պակաս, քան մեկ լվացարան՝ յուրաքանչյուր զուգարանում,

3) իրականացվում է ջեռուցում և բնական օդափոխում,

4) սանիտարական սարքավորումների թվի 3-ից ավելի դեպքում, զուգարանում տեղադրվում է ներհոս-արտաձիգ արհեստական օդափոխության համակարգ:

5) Զուգարանի և հեռավորությունը աշխատատեղերի միջև 50 մետրից ոչ ավելի է:

6) Զուգարանի սանիտարական պահպանումն ապահովվում է համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2009 թվականի ապրիլի 16-ի N 06-Ն հրամանով հաստատված «Հասարակական զուգարաններին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2-III-2.13 սանիտարական կանոնների և նորմերի պահանջների:

Հանգստի սենյակին ներկայացվող պահանջներն են.

1) կահավորվում է համապատասխան կահույքով, կախիչներով, լվացարաններով, խմելու ջրով,

2) ապահովվում է տաքացման և/կամ հովացման սարքավորումներով:

3) Հանգստի սենյակը նախատեսվում է կազմակերպություններում, որտեղ առկա են սառեցնող և տաքացնող միկրոկլիմայով աշխատատեղեր, ինչպես նաև աշխատանքային գործընթացի ծանրության և լարվածության գործոններ՝ աշխատանքի ընթացքում աշխատակիցների ջերմատվության կարգավորման և աշխատողների հանգստի նպատակով:

4) Սանիտարակենցաղային հարմարությունները տեղադրվում են առանձին սենքերում կամ՝ արտադրություններին հարակից:



Ձև N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՇԱԹՎ-29/390 /նախկին 14/34/

Տալու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը 2013թ-ի հունվարի 18 ը
2009թ-ի սեպտեմբերի 28-ից մինչև 2021թ. սեպտեմբերի 28-ը

Գործողության ժամկետը

<ԱՐՄԵՆ և ՆԵՐՍԵՍ> ՍՊԸ

Ընդերքօգտագործողի անվանումը և գտնվելու վայրը

<< Սյունիքի մարզ, գ. Շամբ

03Ա 071786 17.04.2006 թ

Ընդերքօգտագործողի պետական գրանցման
վկայականի համարը և ամսաթիվըՏրամադրված պաշարների քանակն ըստ կարգերի
Հանքի տարեկան620.5 մ³/տարի

/վեց հարյուր քսան ամբողջ հինգ տասնորդական/

արտադրողականությունը

Օգտակար հանածոյի անվանումը

ածխաթթվային հանքային ջուր

Ուղեկից բաղադրիչների անվանումները
Տրամադրված տեղամասի ծայրակետերի կոորդինատները

Կից ներկայացված են՝

Օգտակար հանածոյի

<< Սյունիքի մարզի Շենաթաղ համայնքի ածխաթթվային հանքային ջրի թիվ 1
աղբյուր

արդյունահանման նախագիծը

(նախագծի անվանումը)

Ընդերքօգտագործման պայմանագիրը

ՊՎ-390

(պայմանագրի համարը, կնքման ամսաթիվը)

Լեռնահատկացման ակտը

(համարը, ամսաթիվը)

<< ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ
ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Կ.Տ.



ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ԸՆԴԵՐՔ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՊՎ-390
ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

քաղ. երևան

« 18 » հունիսի 2013թ.

Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը՝ ի դեմս նախարար ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ, որը գործում է Հայաստանի Հանրապետության անունից, իր լիազորությունների սահմաններում (այսուհետ՝ լիազոր մարմին) մի կողմից, և «ԱՐՄԵՆ ԵՎ ՆԵՐՍԵՍ» ՍՊԸ տնտեսավարող սուբյեկտը (այսուհետ՝ ընդերքօգտագործող), ի դեմս տնօրեն Ն.ՍՏԵՓԱՆՅԱՆԻ, որը գործում է իր կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքով (այսուհետ՝ օրենսգիրք) և այլ իրավական ակտերով, համապատասխանաբար նախարարության և տնտեսավարող սուբյեկտի կանոնադրություններով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան փաստաթղթերը, տրամադրվող հանքավայրի հանքային ջրի աղբյուրի կամ հորատանցքի շահագործման նախագիծը, կնքեցին սույն ընդերքօգտագործման պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր):

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պայմանագիրը նախատեսում է հանքավայրի հանքային ջրի աղբյուրը կամ հորատանցքը շահագործման տրամադրելու պայմանները, հանքային ջրի աղբյուրի կամ հորատանցքի կոորդինատները և սանիտարական գոտու սահմանները, կողմերի իրավունքներն ու պարտականությունները, վճարների (բնօգտագործման, բնապահպանական, բնության և շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրման, մշտադիտարկումների իրականացման) վճարման վերաբերյալ դրույթներ, բնապահպանական կառավարման պլանը, ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման (զգուշացման, հրաժարման, փոփոխության), համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունների չափի և կատարման ժամկետների վերաբերյալ, հանքի փակման հետ կապված դրույթները, ինչպես նաև նրանց փոխհարաբերությունները կարգավորող այլ պայմաններ:

1.2 Պայմանագիրը բաղկացած է հիմնական տեքստից և N 1 հավելվածից, որը կազմում է պայմանագրի անբաժանելի մասը:

1.3 Պայմանագրով չկարգավորված հարաբերությունները, այդ թվում՝ կողմերի այլ իրավունքները կարգավորվում են օրենսգրքով, ինչպես նաև ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով:

